ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 19-Հ «30» ապրիլի 2021

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (7-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի ապրիլի -ի N հրամանի

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ (7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա:

Հիմնական (միջին) դպրոցում «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման նպատակն է՝

1. Բնութագրի մարդ, բնություն, մտածողություն հասկացությունները:
2. Գիտակցի կարիքների ու ցանկությունների անսահմանափակությունն ու ռեսուրսների սահմանափակությունը:
3. Հասկանա ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու անհրաժեշտությունն ու ձևերը:
4. Սահմանի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները:
5. Բացատրի և հիմնավորի անձի առանձնահատկությունները և հասարակական կյանքի օրինաչափությունները:
6. Մեկնաբանի և վերլուծի սեփական հույզերը, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:
7. Գիտակցի հույզերի, մտածողության և վարքագծի դերը աշխարհաճանաչողության գործում:
8. Թվարկի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում:

9. Բացատրի ազատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիություն, իրավունքներ և պարտականություններ հասկացությունները:
10. Ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները:
11. ճանաչի մեդիայի ու խոսքի ազատության դերը, որպես ակտիվ քաղաքացի կարողանա օգտագործել մեդիա գործիքները ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներում:
12. Քննադատորեն վերլուծի և ստուգի տեղեկությունները, տարբերի հավաստի ու կեղծ լուրերը:

Միջնակարգ (ավագ) դպրոցում «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման նպատակն է՝

1. Նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապվածությունը:
2. Տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները:
3. Նկարագրի կայուն զարգացման էությունը, հիմնական գաղափարներն ու դրանց փոխադարձ կապերը:
4. Գիտակցի հիմնավորված և կշռադատված որոշումների կայացման կարևորությունը:
5. Պլանավորի և կառավարի անձնական ֆինանսական միջոցներն ու ռեսուրսները:
6. Բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ:
7. Նկարագրի մարդու հիմնախնդիրը հասարակական տարբեր գիտությունների տեսանկյունից:
8. Հիմնավորի մտածողության կարևորությունը ժամանակակից աշխարհում և կիրառի մտածողության տարբեր ձևեր:
9. Ներկայացնի տնտեսության գործունեության մեխանիզմը, գիտակցի ազատ շուկայական տնտեսության կարևորությունը և անհրաժեշտությունը:
10. Համադրի և հակադրի իրավունքի առաջացման ուսմունքները, առանձնացնի իրավունքի աղբյուները և հիմնական ճյուղերը: Մեկնաբանի դրանց նշանակությունը և կարգավորման ոլորտը, ինչպես նաև քննի իրավական համակարգերի ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:
11. Մեկնաբանի իրավունքի հիմնական ճյուղերը՝ վերլուծելով յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրիչները, խնդիրները և կարգավորման ոլորտը:

12. Մեկնաբանի քաղաքական և քաղաքացիական մասնակցության, ՀՀ պետական և համայնքային իշխանության մարմինների ընտրությունների նշանակությունը և ընթացակարգերը:
13. Հիմնավորի խաղի, ուսման, աշխատանքի ու ազատ ժամանակի և ազատության, երջանկության, հավատի, սիրո, բարոյական արժեքների փոխազդեցությունները:
14. Բնութագրի հոգեկան գործընթացները: Հիմնավորի ներառականության կարևորությունը հասարակական կյանքում:
15. Վերլուծի ժամանակակից մարտահրավերներին արդյունավետ դիմակայող հասարակությանը բնորոշ հատկանիշները:
16. Բացատրի քաղաքական գաղափարախոսությունների նշանակությունը հանրային կյանքում:
17. Տարբերակի միջազգային իրավունքի աղբյուրները, դիտարկի պետությունների և միջազգային իրավունքի հարաբերությունները, վերլուծի այդ հարաբերությունները ՀՀ-ում և գլոբալ խնդիրների համատեքստում:

2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը պայմանավորված է ուսուցման երեք բաղադրիչներով՝ իմացական, սոցիալական և անձնային

Իմացական (կոգնիտիվ) բաղադրիչ: Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների շրջանում քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև աշխարհայացքային տարբերությունները, ինչի հետևանքով հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որ սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Դա հասարակական երևույթները տարբեր կողմերից դիտարկելու, դրանց դրական և բացասական հայեցակետերի մասին կշռադատելու և հիմնավորված որոշումներ

կայացնելու հնարավորություն է տալիս: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև ոչ ստանդարտ մոտեցումներ դրսևորելու և դրանով իսկ սովորողների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու լավ հնարավորություն է ստեղծում:

Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու մարդու մտածողության մասին և դրա շնորհիվ յուրացրած հմտությունները կիրառելու որոշակի իրավիճակներում:

Սոցիալական բաղադրիչ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունը:

Շատ կարևոր են այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը և մասնակցությունը:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառելու հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:

Անձնային զարգացման բաղադրիչ: Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով:

Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը և ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր մակարդակը: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունի այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները:

Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի՝ քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

3.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Հանրակրթական հիմնական ծրագրի «Հասարակագիտություն» առարկայի վերջնարդյունքները

7.1.1. Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:
7.1.2. Բացատրի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները:
7.1.3. Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:

7.2.1. Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը:
7.2.2. Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը:
7.2.3. Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը:
7.2.4. Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը:
7.2.5. Բերի օրինակներ «ուրիշի» կարևորության և նրա հետ արդյունավետ հաղորդակցվելու նշանակության մասին:
7.2.6. Մեկնաբանի հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունը սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացման վրա:
7.3.1. Հիմնավորի մտածողության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:
7.3.2. Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ:
7.3.3. Կապակցի հույզերը, մտածողությունը և վարքագիծը:
7.3.4. Դրսևորի նախապաշարմունքներին, կարծրատիպերին, անցանկալի ազդեցություններին դիմակայելու, կեղծ լուրերը զանազանելու և դրանց համարժեք արձագանքելու հմտություն:
7.4.1 Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը:
7.4.2. Սահմանի բարոյականության ոսկե կանոնը:
7.4.3. Նկարագրի բարին և չարը, ազնվությունը և սուտը, պարտքը և խիղճը:
7.4.4. Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը, ամոթը և մեղքը:
7.4.5. Դատողություններ անի բարոյականության հարցերի մասին և որոշումներ կայացնի:

7.5.1. Ներկայացնի «գեղեցիկ» և «տգեղ» հասկացությունները:

7.5.2. Բնութագրի իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը:

7.5.3. Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում:

7.5.4. Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:

7.6.1. Տարբերի իրավական նորմերը սոցիալական այլ նորմերից:

7.6.2. Թվարկի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, մեկնաբանի, թե ինչու են դրանք կոչվում հիմնարար:

7.6.3. Սահմանի իրավունք հասկացությունը և օրինակների միջոցով հիմնավորի դրա կարևորությունը:

7.6.4. Բացատրի իրավահավասարությունը և ներկայացնի մարդու իրավունքների հիմքում ընկած արժեքները (արժանապատվություն, հավասարություն, անխտրականություն, հանդուրժողականություն/ընդունում, հարգանք, բուլիինգ):

7.7.1.Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից:

7.7.2.Նկարագրի արտադրության, բաշխման և սպառման գործընթացները:

7.7.3.Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:

7.7.4.Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

7.8.1 Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում:

7.8.2 Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:

8.1.1. Սահմանի «արժեք» հասկացությունը, հիմնավորի դրանց անհրաժեշտությունը:

8.1.2. Թվարկի ժողովրդավարության հիմնարար արժեքները և դրանք կապի առօրյա կյանքի հետ:

8. 1.3. Ցույց տա ժողովրդավարության հիմնարար արժեքների նշանակությունը իր և հանրային կյանքի կազմակերպման, հասարակական համերաշխության ապահովման գործում:

8.1.4. Օրինակների հիման վրա գնահատի արժեքների անտեսման, աղճատման հետևանքները:

8.2.1. Մեկնաբանի մարդու իրավունքների հիմնական բնութագրիչները՝ հիմնավորելով դրանց կարևորությունը անձնական մակարդակում:

8.2.2.Ճանաչի բացարձակ իրավունքները, բացատրի, թե որն է դրանց առանձնահատկությունը:

8.2.3.Տարբերակի իրավունքի սերունդները՝ ըստ իրենց բովանդակային և գաղափարական առանձնահատկությունների՝ համադրելով դրանց առաջացումը պատմական գործընթացների հետ:

8.2.4.Թվարկի մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքները՝ համադրելով մարդու հիմնարար իրավունքների հետ, օրինակներ բերի այդ իրավունքների իրացման և խախտման վերաբերյալ:

8.2.5.Սահմանի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու վերլուծի օրինակներ, որոնց մեջ առկա են այս իրավունքների խախտումները:

8.2.6.Առանձնացնի «կանաչ իրավունքները» և քննի դրանք տարբեր բնապահպանական շարժումների և գործողությունների համատեքստում:

8.2.7. Բացատրի թվային միջավայրի ազդեցությունը մարդու իրավունքների իրացման գործընթացում:

8.2.8. Կարևորի հատուկ խմբերի իրավունքները և դրանց միջոցով հավասարության գաղափարի հաստատումը՝ ցուցաբերելով հարգալից վերաբերմունք իր և այլոց իրավունքների նկատմամբ:

8.2.9.Համեմատի ատելության խոսքն ու ազատ արտահայտվելու իրավունքը՝ բերելով ատելության խոսքի օրինակներ:

8.3.1 Բացատրի և տարբերակի ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողությունը:

8.3.2. Բացատրի մտածողության մոլորությունները, իմացական պատրանքները և մեկնաբանի դրանց աղճատող ազդեցությունը հասարակական երևույթների ընկալման վրա:

8.3.3 Կապակցի մտածողության մոդելները, մոլորությունները, սխալները համագործակցության, մրցակցության, հակամարտության, խնդիրների լուծման, որոշումների կայացման հետ:

8.3.4 Տարբերակի փաստը և կարծիքը:

8.3.5 Օրինակներից բխեցնի համագործակցության, մրցակցության և կոնֆլիկտի՝ որպես համակեցության բաղադրիչների նշանակությունը:

8.4.1 Սահմանի «առաջնորդություն» հասկացությունը: Տարբերակի առաջնորդության ձևերը:

8.4.2 Դրսևորի խնդիրներ, խնդրակենտրոն հարցեր ձևակերպելու և դրանց լուծումներ առաջարկելու հնարների իմացություն:

8.4.3 Ձևավորի անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:

8.4.4 Ցուցադրի սեփական գործունեությունը պլանավորելու, ժամանակը և այլ ռեսուրսներ արդյունավետ տնօրինելու կարողություններ:

8.4.5. Իրականացնի նպատակային ուսումնասիրություն՝ ընտրելով պիտանի մեդիա նյութեր,

տեսակավորելով տեղեկությունները և փաստագրելով արդյունքները:

8.4.6. Իրողությունները դասակարգի ըստ ժամանակային, տարածական և կառուցվածքային կապերի՝ օգտագործելով կողմնորոշող գիտելիք (օրինակ՝ մտքի քարտեզագրում, պատմական փաստեր և այլն):

8.4.7 Հիմնավորի թիմային աշխատանքի արդյունավետությունը, տարբեր կարողություններ ունեցող մարդկանց համագործակցության առավելությունները՝ գիտակցելով անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը:

9.1.1 Թվարկի պետության հատկանիշներն ու գործառույթները:

9.1.2 Մեկնաբանի «պետություն» և «քաղաքացի» հասկացությունները և ցույց տա դրանց փոխկապակցությունները:

9.1.3. Բացատրի հանրային (պետական) իշխանության էությունը, դրա անհրաժեշտությունը և աղբյուրները:

9.1.4 Մեկնաբանի կոռուպցիայի առաջացման պատճառները և բացասական ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա:

9.2.1. Նկարագրի «մշակույթ» հասկացությունը, դրա առանձնահատկությունները:

9.2.2 Մեկնաբանի մշակույթ-պետություն փոխազդեցությունները:

9.2.3. Դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ:

9.2.4 Ճանաչի ազգային մշակույթը, նյութական և հոգևոր ժառանգությունը և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:

9.3.1.Բացատրի քաղաքացիական հասարակության նշանակությունը պետական իշխանության գործունեության վերահսկողության խնդրում:

9.3.2. Բացատրի պետական իշխանության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխազդեցությունը հանրային բարիքի ստեղծման գործում:

9.3.3. Հասկանա և բացատրի հասարակական կազմակերպությունների, շարժումների, միությունների, ՋԼՄ-ների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը շահերի պաշտպանության, բազմազանության և բազմակարծության ապահովման առումով:

9.4.1. Բացատրի, թե ինչպես են գործում տնտեսական համակարգերը: Ներկայացնի հայաստանյան տնտեսական և ֆինանսական համակարգերը, տարբերակի վերջիններիս մասնակիցներին ու նրանց դերերը:

9.4.2. Ուրվագծի պետության դերը տնտեսության մեջ, հասկանա պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների անհրաժեշտությունն առանձին իրավիճակներում:

9.4.3. Հիմնավորի մրցակցության դերը շուկայական տնտեսությունում: Քննարկի հակամրցակցային գործունեության բացասական ազդեցությունը տնտեսության վրա:

9.5.1 Մեկնաբանի քաղաքական մշակույթի և վարչակարգի տիպը, քաղաքական, քաղաքացիական մասնակցության ձևերը քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման տեսանկյունից:

9.5.2 Դատողություններ անի բազմակարծիք և մասնակցային մշակույթի բնորոշ գծերի մասին:

9.5.3 Բացատրի էլեկտրոնային կառավարման նշանակությունը ժողովրդավարական գործընթացներում:

9.5.4 Տարբերակի Հայաստանի պետական իշխանության ճյուղերի լիազորությունները

9.5.5 Ուրվագծի օրենքների ստեղծման ընթացակարգը և դրա վրա ազդեցություն գործելու մեխանիզմները Հայաստանում:

3.2. Հանրակրթական միջնակարգ ծրագրի «Հասարակագիտություն» առարկայի վերջնարդյունքները

10.1.1. Կիրառի մտածողության տարբեր ձևեր, մոդելներ կոնկրետ օրինակների վրա:

10.1.2. Հիմնավորի քննադատական և ստեղծագործական մտածողության կարևորությունը ժամանակակից աշխարհում:

10.1.3. Բացատրի մտածողության հմտությունները և կիրառի դրանք կոնկրետ օրինակների վրա:

10.2.1 Նկարագրի մարդու հիմնախնդիրը հասարակական տարբեր գիտությունների տեսանկյունից:

10.2.2 Ներկայացնի մարդու և հասարակության մասին առանցքային տեսությունների հիմնադրույթները: (Պլատոն, Արիստոտել, Դավիթ Անհաղթ, Նարեկացի, Մարքս, Նիցշե, Էքզիստենցիալիզմ, Ֆրանկֆուրտյան դպրոց):

10.2.3 Մեկնաբանի մարդու սոցիալականացման և հասարակական փոփոխությունների գործընթացները:

10.2.4 Բացատրի անհատականի և հասարակականի միջև առկա լարումը՝ որպես մարդու կյանքի առանձնահատկություն:

10.3.1 Դատողություններ անի իրավական մտքի դպրոցների զարգացման արդյունքում առաջ եկած ուսմունքների վերաբերյալ:

10.3.2 Առանձնացնի իրավունքի աղբյուները (այդ թվում նաև հայ իրավունքի աղբյուները), մեկնաբանի դրանց տեսակները և առաջացումը:

10.3.3 Բացատրի իրավունքի համակարգը՝ համադրելով այն հասարակական հարաբերությունների հետ:

10.3.4 Տարբերակի իրավունքի հիմնական ճյուղերը՝ մեկնաբանելով դրանցից յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրիչները, խնդիրները և կարգավորման ոլորտը:

10.4.1.Նկարագրի, թե ինչպես են տեղաբաշխվում և օգտագործվում տնտեսական ռեսուրսները, արտադրական գործոնները, նկարագրել դրանց տեղաբաշխման ազդեցությունը տնտեսական և սոցիալական բարեկեցության վրա:

10.4.2.Վերլուծի, թե ինչպես են աշխատում մրցակցային շուկաները:

10.4.3. Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը շուկայի վրա:

10.4.4.Վերլուծի և մեկնաբանի տնտեսական հիմնական ցուցանիշները:

10.5.1. Կայացնի ֆինանսական որոշումներ՝ ըստ գնի, որակի, հանգամանքների, ռիսկերի, համեմատի ֆինանսական ծառայությունները:

10.5.2. Հիմնավորի խնայողությունների արդյունավետ կառավարման նշանակությունը, նկարագրի խնայողությունները տեղաբաշխելու հնարավորությունների առանձնահատկությունները:

10.5.3. Փաստարկի պարտքի արդյունավետ կառավարման նշանակությունը:

10.5.4. Ներկայացնի սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

10.5.5. Նկարագրի ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների տեսակները, դրանցից խուսափելու կամ արդեն առաջացած հետևանքները մեղմելու մեխանիզմները:

10.6.1 Համեմատի քաղաքական գաղափարախոսությունների հիմնադրույթները՝ ցույց տալով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

10.6.2 Բանավիճի անձի ինքնահիրացման և հանրային կյանքի կազմակերպման վրա քաղաքական գաղափարների ու գաղափարախոսությունների հնարավոր ազդեցության շուրջ:

10.6.3 Համեմատի ազգայնականության, ազգայնամոլության և ռասիզմի առանձնահատկությունները՝ ցույց տալով դրանց տարբերություններն ու ընդհանրությունները

10.6.4 Բանավիճի ազգայնականության քաղաքացիական և էթնիկական ձևերի պատմական նշանակության շուրջ:

11.1.1 Ներկայացնի Հայաստանում առկա իրավունքի համակարգը՝ քննելով իրավունքի ճյուղերն ու սահմանադրական իրավունքի դերը տվյալ համակարգում և ՀՀ հասարակության կյանքում:

11.1.3 Տարբերակի քաղաքացիական, վարչական և քրեական վարույթները՝ օրինակների վրա քննելով դրանց առանձնահատուկությունները:

11.1.4 Վերլուծի դատավորների, դատախազության, ոստիկանության, իրավապաշտպանների ու փաստաբանների լիազորությունները ու անկախությունը՝ բացահայտելով յուրաքանչյուրի ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության վրա:

11.1.5 Վերլուծի քաղաքացիական և քրեական իրավունքի հիմքերը, առարկան և առանձնահատկությունները՝ քննելով դրանց զարգացման վրա ազդող գործոնները և անհատների, կառավարությունների ու դատարանների դերն այդ գործընթացում: Բացատրի իրավախախտումն ու իրավական պատասխանատվությունը:

11.2.1 Նկարագրի, թե ինչպես են զարգանում տնտեսությունները:

11.2.2 Նկարագրի ու վերլուծի գնաճը, դրա հետևանքները տնտեսության ու առանձին տնտեսավարողների վրա:

11.2.3 Նկարագրի ու վերլուծի զբաղվածության և գործազրկության ցուցանիշները, դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները:

11.2.4 Նկարագրի առաջարկի և պահանջարկի կարգավորման քաղաքականությունների նշանակությունը, բացատրի, թե ինչպես են պետական տարբեր կառույցները կիրառում այդ քաղաքականությունները:

11.3.1. Մեկնաբանի Հայաստանի օրենսդրությամբ չարգելված քաղաքացիական և քաղաքական մասնակցության ձևերն ու տեսակները ժողովրդավարության և անձի իրավունքների ու շահերի իրացման տեսանկյուններից:

11.3.2. Նկարագրի Հայաստանում իշխանության մարմինների ընտրությունների տիպերն ու մակարդակները, ընթացակարգերը, մեկնաբանի դրանց նշանակությունը հասարակական համակարգի բնականոն գործառության, անձի քաղաքական և քաղաքացիական իրավունքների ու շահերի իրացման տեսանկյուններից:

11.3.3. Քննարկի հակասական դիրքորոշումներ, այդ թվում՝ դրանց սահմանադրականության տեսանկյունից:

11.3.4 Ներկայացնի ընտրական իրավունքի իրացման նորմերը և միջազգային չափանիշները:

11.3.5. Դատողություններ անի ընտրական իրավունքի իրացման վրա ընտրախախտումների ազդեցության և Հայաստանի օրենսդրությամբ դրանց դեմ պայքարի միջոցների մասին:

11.4.1.Մեկնաբանի կուսակցությունների և շահերի խմբերի նշանակությունը Հայաստանի քաղաքական համակարգի գործառության, անձի քաղաքական մասնակցության, քաղաքացու շահերի արտահայտման և պաշտպանության տեսանկյուններից:

11.4.2. Համեմատի կուսակցությունների և կուսակցական համակարգերի տիպերը, ցույց տա կուսակցական համակարգերի թերություններն ու առավելությունները և կապը քաղաքական ռեժիմի տիպի հետ:

11.4.3 Բնութագրի Հայաստանի կուսակցական համակարգը:

11.5.1 Ուսումնասիրի միջազգային իրավունքի աղբյուրները և սկզբունքները՝ հիմնավորելով սկզբունքների նշանակությունը պետությունների հարաբերությունների և համագործակցության տեսանկյունից:

11.5.2 Բացատրի մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային գործառույթները և նշանակությունը՝ օգտագործելով տարբեր պատմական և ժամանակակից/առօրյա իրավիճակներ:

11.5.3 Մեկնաբանի պետության (մասնավորապես՝ ՀՀ) դերը մարդու իրավունքների պաշտպանության մեջ՝ քննելով այն պետությունների կողմից ստորագրված և վավերացված փաստաթղթերի և դրանց արդյունքում առաջ եկած պարտավորությունների համատեքստում:

11.5.4 Վերլուծի Հայաստանին առնչվող տարբեր իրավախախտումների վերաբերյալ ՄԻԵԴ որոշումների և ՄԱԿ-ի պարբերական զեկույցների նմուշներ:

11. 5. 5. Առանձնացնի միջազգային վեճերի տարբեր տեսակներ և համեմատի դրանց լուծման խաղաղ և ոչ խաղաղ մեթոդների ուժեղ և թույլ կողմերը:

11.5.6. Դատողություններ անի, թե տեխնոլոգիական զարգացումն ինչպես է ազդել արդարադատության վրա միջազգային և տեղական մակարդակում:

11.6.1.Նկարագրի միջազգային առևտրի կառուցվածքը: Բացատրի պետության միջամտության աստիճանն առևտրին:

11.6.2.Վերլուծի միջազգային վարկերի, օգնությունների, համագործակցության դերը երկրի տնտեսական զարգացման գործում:

11.7.1 Նկարագրի միջազգային համակարգի կառուցվածքը, դատողություններ անի միջազգային իրավանորմերի և կազմակերպությունների նշանակության վերաբերյալ:

11.7.2 Թվարկի Հայաստանի արտաքին քաղաքականության նպատակներն ու հիմնական սկզբունքները, մեկնաբանի գլխավոր գործընկերների հետ հարաբերությունների նշանակությունը Հայաստանի զարգացման համար:

12.1.1. Բնութագրի հոգեկան գործընթացները:

12.1.2. Տարբերակի անձի անհատական առանձնահատկությունները:

12.1.3. Հիմնավորի ներառականության կարևորությունը հասարակական կյանքում:

12.2.1. Տարբերակի դիցաբանական, կրոնական, գիտական և փիլիսոփայական աշխարհայացքները:

12.2.2 Նկարագրի աշխարհի ճանաչողության ձևերը և թվարկի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

12.2.3 Սահմանի ճշմարտության տեսությունները:

12.2.4 Նկարագրի կյանքի իմաստի տարբեր ընկալումներ:

12.2.5 Մեկնաբանի տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակական կյանքի վրա:

12.2.6 Տարբերակի տեղեկատվության նպատակները և դրսևորի դրանք նպատակային օգտագործելու հմտություններ:

12.3.1. Համադրի խաղի, ուսման, աշխատանքի, հանգստի արժեքը մարդու կյանքում:

12.3.2 Օրինակների հիման վրա դատողություններ անի մարդու կյանքում ազատության, երջանկության, հավատի, սիրո, բարոյական արժեքի մասին:

12.3.3. Օրինակների հիման վրա ներկայացնի գեղագիտական իդեալի և ճաշակի փոխակերպումները պատմության ընթացքում:

12.4.1.Հիմնավորի հանրային բարիքի կարևորությունը:

12.4.2.Նկարագրի, թե ինչ է հասարակական տոկունությունը:

12.4.3.Կապակցի բնության օրենքները, կանոնները հասարակական կյանքի զարգացումների հետ:

12.5.1 Եզրահանգումներ անի գլոբալացման դրական և բացասական կողմերի մասին:

12.5.2 Եզրահանգումներ անի մարդկության գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ կայուն զարգացման համատեքստում:

12.5.3 Բացահայտի գլոբալ հիմնախնդիրների ազդեցությունը Հայաստանի վրա:

4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Առարկայի **առանցքային գաղափարներն են**.

- անհատ-հասարակություն փոխազդեցությունը,
- հասարակության էվոլյուցիան,
- հիմնարար արժեքների նշանակությունը,
- մարդկության գլոբալ հիմնախնդիրները:

Հասարակագիտություն առարկայի առանձնահատկությունն այն է, որ բաղկացած է *սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն* գիտակարգերից, ինչը հնարավորություն է տալիս հասարակական երևույթներն ընկալելու բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը սովորողների մեջ խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումներ զարգացնելու հնարավորություններ է ընձեռում:

Յուրաքանչյուր դասարանի համար ընտրված է մեկ գլխավոր թեմա, որի շուրջ կառուցվում է բովանդակությունը: Այդ թեմաներն են՝

7-րդ դասարան՝ «Մարդ»:

8-րդ դասարան՝ «Հասարակության հիմնասյուներ. արժեքներ և իրավունքներ»:

9-րդ դասարան՝ «Պետություն»:

10-րդ դասարան՝ «Հասարակագիտական մտքի հիմունքներ»:

11-րդ դասարան՝ «Պետական համակարգի իրավական, տնտեսական և քաղաքական բաղկացուցիչները»:

12-րդ դասարան՝ «Ինքնաճանաչողություն»:

Առարկայի դասավանդումը հիմնվելու է 3 մոտեցման վրա.

1. **Հասկացությունների և սկզբունքների ուսուցում,** ինչը հնարավորություն կտա իմանալու առարկայի բովանդակությունը:
2. **Հետազոտական ուսուցում,** ինչը հնարավորություն կտա հասկանալու, որ բազմաթիվ խնդիրներ չունեն միանշանակ լուծումներ և անխուսափելի են մշտական որոնումները:
3. **Նախագծային ուսուցում,** ինչը նպատակ ունի զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ, առաջարկել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:

«Հասարակագիտություն» առարկայի առանցքային գաղափարների ուսուցումը հիմնվելու հետևյալ մոտեցումների վրա.

- Դասավանդման ընթացքում կիրառվելու է **ինտեգրված մոտեցումը**, ինչը հնարավորություն է տալու թեմաները դիտարկելու փոխկապակցվածության մեջ:
- Կարևորվելու է **պարույրի մոտեցումը**, որը հնարավորություն է տալու առանցքային գաղափարներին անդրադառնալու շարունակաբար և բարդության տարբեր մակարդակներով:
- Միակողմանի մոտեցումից խուսափելու համար թեմաների ներկայացման հիմքում դրվելու է **պատմական մոտեցումը,** ինչը ենթադրում է ներկայացնել խնդրի մասին բոլոր կարևոր տեսությունների, մոտեցումների էվոլյուցիան:
- Բովանդակության ներկայացումը հնարավորինս զերծ պահել կատեգորիկ մոտեցումներից, որպեսզի **սովորողները հնարավորություն ունենան դրսևորելու մտածողության կարողունակություն, զարգացնելու որոշում կայացնելու և դիրքորոշում ունենալու հմտություններ:**
- Առարկայի բովանդակությունը իրականության հետ կապելու համար ներառել **հայ հասարակագիտական մտքի, արվեստի, գրականության ձեռքբերումները** և Հայաստանի անցյալին ու ներկային վերաբերող օրինակները:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական գործընթացն իրականացվելու է խառը ուսուցման ձևաչափով (blended): Կիրառվելու են դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է համադասարանական, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում, ելնելով թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

- ուսումնական նյութի բացատրում,
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ,

- աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների նյութերով՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ):
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում,
- հիմնախնդիրների հետազոտում,
- հանդիպումներ,
- մրցույթների անցկացում,
- հաշվետվությունների և էսսեների պատրաստում,
- բանավեճերի կազմակերպում,
- ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում,
- դերային խաղեր,
- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում,
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում,
- անդրադարձ ուսումնական գործունեությանը:

6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատման գործընթացում կիրառվելու են բազմաթիվ եղանակներ, բայց հիմնական շեշտը դրվելու է ձևավորող գնահատման վրա: Ձևավորող գնահատման ձևերից հատկապես կարևորվելու է հետադարձ կապը, որը աշակերտների ձեռքբերումներն արձանագրելու և բացթողումների շտկման ուղիները գտնելու հնարավորություն է տալու: Մեծ դասարաններում կարող է կիրառվել ձևավորող գնահատման ընդհանրական տարբերակը, երբ ուսուցիչն ամբողջ դասարանին ներկայացնում է սովորողների մոտ նկատվող տիպական սխալները: Փոքր դասարաններում կարող է կիրառվել անհատական հետադարձ կապի համակարգը:

Մեծ կարևորություն է տրվելու գնահատման եղանակները դասավանդման մեթոդների հետ միասնության մեջ դիտարկելու մոտեցմանը: Գնահատումը չպետք է դիտարկվի դասավանդման մեթոդներից անջատ, քանի որ դա կարող է բերել գիտելիքների, հմտությունների ոչ համարժեք գնահատման:

Գնահատման գործընթացում անհրաժեշտ հաշվի առնել 3 գործոն՝

- սովորողի արդյունքի գնահատում,
- սովորողի առաջընթացի գնահատում,

- սովորողի գործադրած ջանքի գնահատում:

Կիրառվելու են գնահատման գրավոր և բանավոր եղանակներ:

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող ժամաքանակ 34 ԺԱՄ)

Հասարակագիտություն
Թեմա 1. Մարդ-բնություն (3 ժամ)
Նպատակ
Սովորողները կհասկանան բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը, օրինակների միջոցով կներկայացնեն բնության և հասարակության փոխկախվածությունը:
Վերջնարդյունք
7.1.1. Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: 7.1.2. Բացատրի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները: 7.1.3. Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:
Թեմայի բովանդակություն
1. Մարդը՝ որպես բնության մաս: 2. Մարդ- բնություն հարաբերությունների էվոլյուցիան:

1. Ինչպե՞ս է մարդը կապված բնության հետ:
2. Ինչպե՞ս է փոխվել մարդ-բնություն կապը պատմության ընթացքում:
3. Ինչո՞ւ է կարևոր բնության պահպանությունը մարդու առողջության համար:
4. Որո՞նք են բնության հետ ներդաշնակ լինելու կանոնները: Ի՞նչ պետք է անի մարդը, որպեսզի կարողանա ներդաշնակ լինել բնության հետ:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Զրույցներ և զեկույց ● Անցկացնել 2-3 զրույց «Մարդու դրական և բացասական ազդեցությունը բնության վրա» թեմայով: Զրույցների արդյունքների հիման վրա պատրաստել հակիրճ հաղորդում: ● Առանձնացնել համայնքային մեկ բնապահպանական խնդիր և հիմնավորել մարդու ազդեցությունն այդ խնդրի ծագման վրա: ● Պատրաստել բնության պահպանությանը վերաբերող ցուցապաստառներ:	● **Օրինաչափություններ** Բնության, մարդու և հասարակության փոխազդեցությունները:

Միջառարկայական կապերը թեմայում
Կենսաբանություն - Մարդու էվոլյուցիան: **Աշխարհագրություն** - Մարդու զարգացումը աշխարհագրական միջավայում, միջավայրի ազդեցությունը:
Հանրակրթական չափորոշիչ
Հ11, Հ12

Հասարակագիտություն
Թեմա 2. Մարդ-ընտանիք-համայնք-հասարակություն (4 ժամ)
Նպատակ

Սովորողները կգիտակցեն մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:	
Վերջնարդյունքներ	
7.2.1.Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը: 7.2.2.Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը: 7.2.3.Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը: 7.2.4. Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը: 7.2.5. Բերի օրինակներ «ուրիշի» կարևորության և նրա հետ արդյունավետ հաղորդակցվելու նշանակության մասին: 7.2.6.Մեկնաբանի հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունը սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացման վրա:	
Թեմայի բովանդակություն	
1.Հասարակական կյանքի առանձնահատկությունները: 2.Հասարակության սոցիալական կազմը: Խմբեր, շերտեր, համայնքներ: 3. Արդյունավետ հաղորդակցում:	
1. Ինչո՞ւ են մարդիկ ապրում փոքր և մեծ խմբերով: 2. Ի՞նչ է տալիս մարդը խմբին, խումբը՝ մարդուն: 3. Ինչպե՞ս են մարդիկ հաղորդակցվում: 4.Մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունն ի՞նչ ազդեցություն է ունենում հասարակական խմբերի ձևավորման վրա:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Ինքնավերլուծություն, զրույցներ, հարցազրույցներ	• **Համակարգեր** Անհատի և հասարակության փոխկապվածությունը: Հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունը

Իրական օրինակներով ներկայացնել մարդու և հասարակության փոխներգործությունը: Ուսումնասիրել ժողովրդական ավանդույթներ և ծեսեր: Նկարել սոցիալական տարբեր խմբեր:	պատմական տարբեր ժամանակահատվածներում: ● **Անհատներ և հարաբերություններ** Մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն - Քարտեզ, աշխարհագրական միջավայրի ազդեցության ուսումնասիրությունը: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Հասարակության փոփոխության պատմական ազդեցությունն ու նշանակությունը: **Գրականություն** - Համապատասխան տեքստերի ուսումնասիրում և մեկնաբանում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ16, Հ23, Հ24, Հ35	

Հասարակագիտություն
Թեմա 3. Մարդ-մտածողություն, սոցիալական-էմոցիոնալ հմտություններ (5 ժամ)
Նպատակ
Սովորողները կհասկանան մտածողության, սոցիալական հմտությունների, հույզերի կարևորությունը մարդու կյանքում և որոշակի օրինակների ու իրավիճակների վերլուծության միջոցով կզարգացնեն ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:

Վերջնարդյունք
7.3.1.Հիմնավորի մտածողության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: 7.3.2.Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ: 7.3.3.Կապակցի հույզերը, մտածողությունը և վարքագիծը: 7.3.4.Դրսևորի նախապաշարմունքներին, կարծրատիպերին, անցանկալի ազդեցություններին դիմակայելու, կեղծ լուրերը զանազանելու և դրանց համարժեք արձագանքելու հմտություն:
Թեմայի բովանդակություն
1. Մտածողություն: Մտածողության կանոններ: 2. Հույզեր: 3. Մտածողության, հույզերի և վարքագծի կապը: 4. Նախապաշարմունքներ, կարծրատիպեր, ազդեցություններ:
1. Ինչպե՞ս են մտածողությունը, սոցիալական հմտությունները և հույզերը ձևավորում մարդուն: 2. Ինչպե՞ս են հույզերը, մտածողությունը և վարքագիծը կապված իրար հետ: Ինչո՞ւ է այդ երեքի ներդաշնակությունը կարևոր: 3. Արդյոք հնարավո՞ր է խուսափել նախապաշարմունքներից, կարծրատիպերից և անցանկալի ազդեցություններից: 4. Ինչպե՞ս դիմակայել դրանց: 5. Ինչպե՞ս է մտածողությունն ազդում մեր կայացրած որոշումների վրա: 6. Ինչպե՞ս ենք արտահայտում հաճելի և տհաճ զգացողությունները:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Համառոտ էսսեի պատրաստում: Բովանդակությանն	• **Օրինաչափություններ** Մտածողության, սոցիալական հմտությունների և հույզերի փոխակապվածությունը:

առնչվող պատկերների քննարկում, հարց ու պատասխան: Ունկնդրել երաժշտությունը և նեկայացնել առաջացնող հույզերը:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Լեզուներ և գրականություն - Համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանում: **Արվեստ** - Հույզերի արտահայտումը գեղարվեստի, երաժշտության մեջ:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ20, Հ21, Հ25, Հ26, Հ31, Հ32, Հ34, Հ37	

Հասարակագիտություն **7-րդ դասարան**
Թեմա 4. Մարդ-բարոյականություն (5 ժամ)
Նպատակ
Սովորողները կհիմնավորեն բարոյական նորմերի անհրաժեշտությունը, կբացատրեն բարոյագիտության առանցքային հասկացությունները: Կկարողանան դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:
Վերջնարդյունք
7.4.1 Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը: 7.4.2. Սահմանի բարոյականության ոսկե կանոնը: 7.4.3. Նկարագրի բարին և չարը, ազնվությունը և սուտը, պարտքը և խիղճը: 7.4.4. Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը, ամոթը և մեղքը: 7.4.5. Դատողություններ անի բարոյականության հարցերի մասին և որոշումներ կայացնի:

Թեմայի բովանդակություն
1. Բարոյական նորմերի նշանակությունը: Բարոյականության ոսկե կանոնը: 2. Ազնվություն և սուտ: Բարի և չար: Պարտք և խիղճ: 3. Էգոիզմ և ալտրուիզմ: Ամոթ և մեղք: 4. Բարոյականության հարցերի մասին կշռադատումներ և որոշումների կայացում:
1. Ի՞նչու է բարոյականությունը կարևոր: Ի՞նչ կլինի, եթե չլինեն բարոյական նորմեր: 2. Որո՞նք են բարոյականության հիմնական հասկացությունները: Ինչպե՞ս են դրանք դրսևորվում: 3. Ինչպե՞ս է մարդու մտածողությունն ազդում բարոյական հարցերի մասին որոշումներ կայացնելու վրա: 4. Ինչպե՞ս է հասարակությունն ազդում բարոյական նորմերի վրա:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Ներկայացնել իրավիճակային խնդիրներ, օրինակ՝ նկարագրել իրավիճակներ, երբ նույն մարդը դրսևորում է էգոիզմ ու ալտրուիզմ: Անցկացնել քննարկումներ, օրինակ՝ ի՞նչ կլիներ, եթե չլինեին բարոյական նորմերը:	• **Պատճառ և հետևանք** Մարդկանց արարքների պատճառահետևանքային կապերը:

Միջառարկայական կապերը թեմայում
Լեզուներ և գրականություն - Համապատասխան տեքստերի ուսումնասիրում: **Արվեստ** - Հոգևոր երաժշտություն, նկարչություն: **Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն** - Գաղափարական փոփոխությունները պատմական ժամանակաշրջաններում:
Հանրակրթական չափորոշիչ
Հ23, Հ35, Հ42

Հասարակագիտություն	
Թեմա 5. Մարդ-գեղագիտություն (3 ժամ)	
Նպատակ	
Սովորողները կբնութագրեն գեղեցիկը և տգեղը՝ դրանք դիտարկելով արվեստի, բնության և մարդու համատեքստում:	
Վերջնարդյունք	
7.5.1.. Ներկայացնի «գեղեցիկ» և «տգեղ» հասկացությունները: 7.5.2. Բնութագրի իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը: 7.5.3. Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում: 7.5.4. Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:	
Թեմայի բովանդակություն	
1. «Գեղեցիկ» և «տգեղ» հասկացությունները: 2. Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը: 3. Գեղեցիկն արվեստում:	
1. Ինչո՞ւ են մարդիկ տարբերակում գեղեցիկը և տգեղը: 2. Արդյոք գեղեցիկն ու տգեղը անհատական ընկալումներ են: 3. Ինչպե՞ս է ազդում պատմական ժամանակը գեղեցիկի և տգեղի ընկալումների վրա: 4. Ինչո՞ւ է գեղեցիկը հատկապես դրսևորվում արվեստում: 5. Ի՞նչ կլինի, եթե մարդկությունը չունենա գեղեցիկի և տգեղի ընկալումներ:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Քննարկել տարբեր ազգերի կողմից գեղեցիկի ընկալման օրինակներ: Ուսումնասիրել արվեստի	• **Անհատական և մշակութային արտահայտում** Որո՞նք են ստեղծարարության բնույթը և նպատակը: Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ,

գործեր և ներկայացնել օրինակներ գեղագիտական հիմնական հասկացությունների վերաբերյալ: Ներկայացնել սիրած երաժշտական ժանրերը:	արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Արվեստ - Գեղեցիկի ընկալումը արվեստում: **Գրականություն** - Տեքստի ուսումնասիրում ու մեկնաբանում: **Երկրաչափություն** - Չափումների կատարում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ43, Հ45, Հ46	

Հասարակագիտություն
Թեմա 6՝ Մարդ-իրավունք (3 ժամ)
Նպատակ
Սովորողները ձեռք կբերեն մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ գիտելիք՝ գործնական առաջադրանքների միջոցով զարգացնելով դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:
Վերջնարդյունք
7.6.1. Տարբերի իրավական նորմերը սոցիալական այլ նորմերից: 7.6.2. Թվարկի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, մեկնաբանի, թե ինչու են դրանք կոչվում հիմնարար:

7.6.3. Սահմանի իրավունք հասկացությունը և օրինակների միջոցով հիմնավորի դրա կարևորությունը:

7.6.4. Բացատրի իրավահավասարությունը և ներկայացնի մարդու իրավունքների հիմքում ընկած արժեքները (արժանապատվություն, հավասարություն, անխտրականություն, հանդուրժողականություն/ընդունում, հարգանք, բուլիինգ):

Թեմայի բովանդակություն

1. Իրավունք. հասկացությունը, բնույթն ու առաջացումը:
2. Մարդու հիմնարար իրավունքներ և ազատություններ:

Ուղղորդող հարցեր

1. Որո՞նք են իրավունքի և ազատության առաջացման պատճառները:
2. Ինչո՞վ են տարբերվում իրավունքները սոցիալական այլ նորմերից (սովորույթներ և ավանդույթներ):
3. Ինչպե՞ս են կապակցված իրավունքների հիմքում ընկած արժեքները:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Վելուծություններ էսսեներ՝ մարդու իրավունքների, դրանց հիմքում ընկած արժեքների և իրավահավասարության վերաբերյալ Համադրումներ՝ իր կարիքները և մարդու հիմնարար իրավունքները: Պաստառների պատրաստում: Ուսումնասիրել և ներկայացնել առօրյայում տեսանելի բուլիինգային իրավիճակներ: Դասակարգել իրավունքները՝ ըստ իրենց նախընտրած առաջնահերթության և հիմնավորել:	**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Ուսումնասիրել մարդկության պատմության շրջադարձային կետերը մարդու իրավունքների և արժեհամակարգի տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում
Հայոց և համաշխարհային պատմություն - Իրավական նորմերի ուսումնասիրումը պատմական տարբեր ժամանակներում: **Լեզուներ և գրականություն** - Տեքստերի ընթեցում և մեկնաբանում:
Հանրակրթական չափորոշիչ
Հ23, Հ39, Հ40, Հ41, Հ42

Հասարակագիտություն
Թեմա 7. Մարդ- տնտեսություն (3 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները բավարարելու համար համադրել դրանք առկա ռեսուրսների հետ, կկարողանան մեկնաբանել սակավության հիմնախնդիրը: Կնկարագրեն արտադրության, բաշխման և սպառման գործընթացները: Կկարևորեն աշխատանքի, խնայողությունների դերը իրենց ներկա և ապագա կյանքում: Կկազմեն անձնական և ընտանեկան բյուջե:
Վերջնարդյունք
7.7.1.Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից: 7.7.2.Նկարագրի արտադրության, բաշխման և սպառման գործընթացները: 7.7.3.Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը: 7.7.4.Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:
Թեմայի բովանդակություն
1. Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր:

2. Արտադրություն, բաշխում և սպառում, տնտեսական հիմնական երեք հարցերը (Ի՞նչ, ինչպե՞ս, ո՞ւմ համար):
3. Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները:
4. Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողություններ ներկայում և ապագայում:

Ուղղորդող հարցեր

1. Ինչպե՞ս է մեր և այլոց որոշումների վրա ազդում ռեսուրսների սահմանափակ լինելը:
2. Որո՞նք են տնտեսական հիմնական երեք հարցերը և ի՞նչ խնդիրների լուծումներն են տալիս դրանց պատասխանները:
3. Ինչո՞ւ են մարդիկ աշխատում, ինչո՞ւ են խնայում:
4. Որո՞նք են մարդկանց կարիքներն ու ցանկությունները, ինչո՞ւ են մարդիկ տարանջատում դրանք կամ չեն տարանջատում:
5. Ինչպե՞ս կազմել անձնական, ընտանեկան բյուջե:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Քննարկումներ «Իսկ ի՞նչ կլիներ, եթե ռեսուրսները լինեին անսահմանափակ և սակավության խնդիր չլիներ» թեմայի շուրջ: Վերլուծել և հիմնավորել, թե ինչպես կարող են խնայողությունները նպաստել մեր կարիքների և ցանկությունների բավարարմանը ներկայում և ապագայում: Կատարել հաշվարկային	• **Համակարգեր և մոդելներ** Տնտեսական որոշումներ, խնայողություններ, կարիքներ և ցանկություններ, եկամտի բաշխում, մտքերն արտահայտել նկարների, դիագրամների տեսքով, գրավոր և բանավոր նկարագրությամբ:

վարժություններ, օրինակ՝ կազմել սեփական կամ ընտանիքի մեկամսյա բյուջե՝ առանձնացնելով առաջնային և երկրորդային ծախսերը: Ներկայացնել տնտեսության երեք հարցերի վերաբերյալ գործնական օրինակներ՝ ըստ արտադրության տարբեր ճյուղերի: Մեկնաբանել «Ադամանդի ու ջրի պարադոքսը»:	

Միջառարկայական կապերը թեմայում
Հանրահաշիվ - Հաշվարկների կատարում և խնդիրների ստեղծում: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստերի ուսումնասիրում և մեկնաբանում: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Տնտեսական մոդելների ուսումնասիրումը:
Հանրակրթական չափորոշիչ
Հ17, Հ20

Հասարակագիտություն
Թեմա 8. Մարդ-քաղաքականություն (2 ժամ)
Նպատակ

Սովորողը կկարողանա մեկնաբանել քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում և անհատի կյանքում, օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:	
Վերջնարդյունք	
7.8.1 Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում: 7.8.2 Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:	
Թեմայի բովանդակություն	
1. Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում: 2. «Բարձր» և «ցածր» քաղաքականություն: 3. Քաղաքականության անհատական և հավաքական սուբյեկտները: Մարդը՝ քաղաքական էակ: 4. Քաղաքականություն և իշխանություն. իշխանության էությունը, տեսակները և ռեսուրսները:	
Ուղղորդող հարցեր	
1. Ի՞նչ է քաղաքականությունը: 2. Ինչպե՞ս է քաղաքականությունն ազդում անհատի ու հասարակության վրա, և ինչպե՞ս են ազդում անհատն ու հասարակությունը քաղականության վրա: 3. Ինչպե՞ս են կապված քաղաքականության «բարձր» և «ցածր» ձևերը, ինչպե՞ս կարող է այդ փոխկապվածությունն ազդել անհատի ու հասարակության վրա: 4. Ինչպե՞ս են կապված իշխանությունը և ազդեցությունը:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակների քննարկման առաջադրանքներ Օրինակի միջոցով ցույց	• **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն** Ուսումնասիրել մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապվածությունը, համաշխարհային և

տալ քաղաքականության կապը հասարակական կյանքի այլ ոլորտների հետ: Օրինակների միջոցով ներկայացնել, թե ինչպես է քաղաքականությունն ազդում մարդու և նրա սոցիալական միջավայրի վրա:	տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Քաղաքական մոդելներ, պետության կառավարման ձևեր: **Աշխարհագրություն** - Քաղաքական մոդել, բնակչություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17, Հ23, Հ24	

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող ժամաքանակ 34 ժամ)

Հասարակության հիմնասյուներ.
արժեքներ և իրավունքներ

Հասարակագիտություն
Թեմա 1. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ (7 ժամ)
Նպատակ
Սովորողները կիմանան, թե ինչ է արժեքը, կհասկանան արժեքների ուղղորդող ազդեցությունը դիրքորոշում արտահայտելու, որոշումներ կայացնելու, վարքագծի վրա:
Վերջնարդյունքը
8.1.1. Սահմանի «արժեք» հասկացությունը, հիմնավորի դրանց անհրաժեշտությունը: 8.1.2. Թվարկի ժողովրդավարության հիմնարար արժեքները և դրանք կապի առօրյա կյանքի հետ: 8. 1.3. Ցույց տա ժողովրդավարության հիմնարար արժեքների նշանակությունը իր և հանրային կյանքի կազմակերպման, հասարակական համերաշխության ապահովման գործում: 8. 1.4. Օրինակների հիման վրա գնահատի արժեքների անտեսման, աղճատման հետևանքները:
Թեմայի բովանդակություն
1. Արժեք հասկացությունը: Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: 2. Ազատություն հասկացությունը: Ազատության դրսևորումները և սահմանափակումները: 3. Արդարություն: Արդարության տեսակները: Արդարության բարոյական և իրավական կողմերը: 4. Հավասարություն: Սոցիալական հավասարություն: Իրավահավասարություն: 5. Պատասխանատվություն: Պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը: Իրավունք, պարտականություն և պատասխանատվություն:

6. Հանդուրժողականություն: Հանդուրժողականության սահման:	
Ուղղորդող հարցեր 1. Ինչպե՞ս են արժեքներն օգնում մեզ կյանքն ավելի իմաստալից դարձնելու հարցում: 2. Ինչպե՞ս են իրար հետ կապված ազատությունը և արդարությունը: 3. Կարո՞ղ են գոյություն ունենալ արդար անհավասարությունը և անարդար հավասարությունը: Ինչպե՞ս վերաբերվել դրանց: 4. Ինչպե՞ս են կապված իրավունքը, պարտականությունը և պատասխանատվությունը: 5. Ի՞նչ կլինի, եթե մարդիկ ամեն ինչ հանդուրժեն:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակային խնդիրների վրա կատարել արժեքների ընտրություն, առաջնահերթությունների դասակարգում: Ներկայացնել տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը և վերլուծել դրանք: Ներկայացնել պատասխանատվություն ստանձնելու դրական և բացասական հետևանքները, օրինակ՝ ֆինանսական պարտքը իրավական և բարոյական պատասխանատվության տեսանկյունից. «Ի՞նչ կլինի,	• **Համակարգեր և մոդելներ** Ուսումնասիրել արժեքների կարևորությունը և ազդեցությունը ժողովրդավարական հասարակության մոդելավորման վրա:

եթե ես պարտք վերցնեմ և չվերադարձնեմ»:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Գրականություն - Համապատասխան տեքստի մեկնաբանում: **Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն** - Ժողովրդավարության հիմնարար արժեքների էվոլյուցիան պատմության մեջ:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ20, Հ35, Հ42	

Հասարակագիտություն
Թեմա 2. Մարդու իրավունքներ (7 ժամ)
Նպատակ
• Սովորողները ձեռք կբերեն իրավունքները բազմակողմանիորեն դիտարկելու կիրառական գիտելիքներ ու հմտություններ և դրանց հիման վրա վերաբերմունք կձևավորեն համակեցության գործընթացում իրավունքի կարևորության մասին: • Տարբեր առաջադրանքների միջոցով կկարողանան վերլուծել մարդու իրավունքների սերունդների գաղափարական առանձնահատկությունները:
Վերջնարդյունք

8.2.1. Մեկնաբանի մարդու իրավունքների հիմնական բնութագրիչները՝ հիմնավորելով դրանց կարևորությունը անձնական մակարդակում:

8. 2.2.Ճանաչի բացարձակ իրավունքները, բացատրի, թե որն է դրանց առանձնահատկությունը:

8.2.3.Տարբերակի իրավունքի սերունդները՝ ըստ իրենց բովանդակային և գաղափարական առանձնահատկությունների՝ համադրելով դրանց առաջացումը պատմական գործընթացների հետ:

8.2.4.Թվարկի մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքները՝ համադրելով մարդու հիմնարար իրավունքների հետ, օրինակներ բերի այդ իրավունքների իրացման և խախտման վերաբերյալ:

8.2.5.Սահմանի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու վերլուծի օրինակներ, որոնց մեջ առկա են այս իրավունքների խախտումները:

8.2.6.Առանձնացնի «կանաչ իրավունքները» և քննի դրանք տարբեր բնապահպանական շարժումների և գործողությունների համատեքստում:

8.2.7. Բացատրի թվային միջավայրի ազդեցությունը մարդու իրավունքների իրացման գործընթացում:

8.2.8. Կարևորի հատուկ խմբերի իրավունքները և դրանց միջոցով հավասարության գաղափարի հաստատումը՝ ցուցաբերելով հարգալից վերաբերմունք իր և այլոց իրավունքների նկատմամբ:

8.2.9.Համեմատի ատելության խոսքն ու ազատ արտահայտվելու իրավունքը՝ բերելով ատելության խոսքի օրինակներ:

Թեմայի բովանդակություն

1. Մարդու իրավունքների հիմնական բաղադրիչները (անօտարելի, անբաժանելի, համընդհանուր, փոխկապակցված). բացարձակ իրավունքներ: Մարդու իրավունքների սերունդներ:
2. Մարդու քաղաքական ու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները. Էությունը, առանձնահատկությունները և կիրառելիության շրջանակը:
3. Մարդու սոցիալական, տնտեսական ու մշակութային իրավունքներն ու ազատությունները. Էությունը, առանձնահատկությունները և կիրառելիության շրջանակը:
4. Կոլեկտիվ իրավունքներն ու ազատությունները. Էությունը, առանձնահատկությունները և կիրառելիության շրջանակը: «Կանաչ իրավունքներ» և բնապահպանական շարժումներ:
5. Թվային իրավունքներն ու ազատությունները. Էությունը, առանձնահատկությունները և կիրառելիության շրջանակը: Ատելության խոսք:
6. Առանձին խմբերի իրավունքները: «Կանանց իրավունքներ», «Երեխաների իրավունքներ», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ»:

Ուղղորդող հարցեր

1. Որո՞նք են մարդու իրավունքների սերունդները, ի՞նչ առանձնահատկություններ ունեն դրանցից յուրաքանչյուրը, ի՞նչ խնդիրներ են լուծում դրանցից յուրաքանչյուրը:
2. Որո՞նք են կոլեկտիվ իրավունքները, ո՞րն է դրանց կիրառելիության ոլորտը: Ի՞նչ է «Կանաչ իրավունքը», ի՞նչ է բնապահպանական շարժումը և ի՞նչ խնդիր է այն լուծում:
3. Ինչու՞ են կարևոր թվային իրավունքներն ու ազատությունները (ատելության խոսք, խոսքի ազատություն), ինչպես են դրանք առաջացել, որտե՞ղ են կիրառվում:
4. Ո՞րն է իրավունքի սերունդների և «Սահմանադրության» կապը, ինչպե՞ս են իրավունքներն արտացոլվում «Սահմանադրության մեջ»: Ի՞նչ դեր ունի «Սահմանադրություն»-ը իրավունքների արտացոլման և պահպանման մեջ:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**

Հետազոտական աշխատանք Ձևակերպել հետազոտական հարցեր, նպատակներ և վերլուծություններ՝ հղումներ անելով մարդու իրավունքների հիմքում ընկած փաստաթղթերին և օգտվելով այդ փաստաթղթերում առկա բառապաշարից: Սոցիալական ցանցերում գտնել ակնհայտ և թաքնված ատելության խոսքը, համեմատել ազատ արտահայտման իրավունքի հետ: Քննարկել օրինակներ բացարձակ իրավունքների և դրանց խախտումների վերաբեյալ, այդ թվում և մարդկության արդի հիմնախնդիրներից թրաֆիքինգի և ստրկության վերաբեյալ: **Բանավեճեր և դերախաղեր** առանձին խմբերի իրավունքների, դրանց առաջացման պատճառների և նշանակության վերաբերյալ:	• **Արդարություն և զարգացում** Վերլուծել մարդու իրավունքների սերունդների գաղափարական առանձնահատկությունները:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն - Լուսավորական շարժում, իրավունքի նորմերը պատմական տարբեր ժամանակներում և տարբեր քաղաքակրթություններում: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի հետազոտում և մեկնաբանում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ21, Հ23, Հ39, Հ40, Հ41, Հ42	

Հասարակագիտություն

Թեմա 3. Մտածողություն և հասարակական խնդիրներ (7 ժամ)
Նպատակ
Սովորողները կիմանան ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողության մասին: Կբացատրեն մտածողության մոլորությունները, կարծրատիպերը, իմացական պատրանքները՝ մեկնաբանելով դրանց բացասական ազդեցությունը հասարակական կյանքի ընկալման վրա: Կարժևորեն համագործակցության, մրցակցության և կոնֆլիկտի նշանակությունը հասարակական կյանքում:
Վերջնարդյունք
8.3.1 Բացատրի և տարբերակի ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողությունը: 8.3.2. Բացատրի մտածողության մոլորությունները, իմացական պատրանքները և մեկնաբանի դրանց աղճատող ազդեցությունը հասարակական երևույթների ընկալման վրա: 8.3.3 Կապակցի մտածողության մոդելները, մոլորությունները, սխալները համագործակցության, մրցակցության, հակամարտության, խնդիրների լուծման, որոշումների կայացման հետ: 8.3.4 Տարբերակի փաստը և կարծիքը: 8.3.5 Օրինակներից բխեցնի համագործակցության, մրցակցության և կոնֆլիկտի՝ որպես համակեցության բաղադրիչների նշանակությունը:
Թեմայի բովանդակություն
1. Մտածողություն: Ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողություն: 2. Տրամաբանական մոլորություններ՝ «Ընդդեմ մարդու», «Ծղոտե մարդու փաստարկ», «Ծագման սխալ», «Հապճեպ ընդհանրացում», «Գերընդհանրացում»: «Մտքի նենգափոխում», «Աղոտ բառ», «Կեղծ երկվություն», «Արատավոր շրջան», «Փաստի և կարծիքի նույնացում»: 3. Իմացական պատրանքներ՝ «Հասանելիության էֆեկտ», «Նեգատիվության էֆեկտ», «Հաստատման կողմնակալություն», «Նորության էֆեկտ», «Կենտրոնացման էֆեկտ»: 4. Համագործակցությունը, մրցակցությունը, կոնֆլիկտը որպես հասարակական կյանքի

բաղադրիչներ և շարժիչ ուժեր: Մտածողության մոլորությունների, իմացական պատրանքների աղճատող ազդեցությունը վերջիններիս ընկալման վրա:	
Ուղղորդող հարցեր 1. Ինչպե՞ս են ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողությունները դրսևորվում մեր կյանքում: 2. Ինչպե՞ս կարող է օգնել մեզ տրամաբանական մոլորություններից խուսափելը: 3. Ի՞նչ հետևանքներ են ունենում իմացական պատրանքները: 4. Ի՞նչ կլինի, եթե համագործակցությունը, մրցակցությունը, կոնֆլիկտը չլինեն մեր կյանքում:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Օրինակների միջոցով մտածողության կանոնների, հմտությունների կիրառում: Կոնֆլիկտային իրավիճակներում հնարավոր վարքագծերի քննարկում: Քննարկել այնպիսի իրավիճակներ, որտեղ կներկայացվեն ընկերների, հարազատների, գովազդի ազդեցության վերաբերյալ օրինակներ:	• **Անհատական և մշակութային արտահայտում** Մտածողության կանոնների իմացությունը՝ որպես անհատական և մշակութային արտահայտման միջոց: • **Անհատներ և հարաբերություններ** Համագործակցությունը, մրցակցությունը, կոնֆլիկտը՝ որպես անհատների միջև հարաբերությունների կարգավորման եղանակներ:
Միջառարկայական կապերը թեմայում	
Կենսաբանություն - Մրցակցությունը, բնական ընտրությունը բնության մեջ: **Հանրահաշիվ** - Հաշվարկներ, խնդիրների ստեղծում: **Գրականություն** - Համապատասխան տեքստի ուսումնասիրում և մեկնաբանում:	

Հանրակրթական չափորոշիչ
Հ20, Հ25, Հ26, Հ31, Հ32, Հ34, Հ36, Հ37

Հասարակագիտություն
Թեմա 4. Թիմային և նախագծային աշխատանք (8 ժամ)
Նպատակ
Սովորողները կգիտակցեն առաջնորդության և թիմի հետ մասնակցային աշխատանքի կարևորությունը: Կկարողանան թիմային աշխատանքների միջոցով ձևակերպել խնդիրներ, առաջարկել լուծման քայլեր և հանգել փոխզիջումային որոշումների՝ կարևորելով ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:
Վերջնարդյունք
8.4.1 Սահմանի «առաջնորդություն» հասկացությունը: Տարբերակի առաջնորդության ձևերը: 8.4.2 Դրսևորի խնդիրներ, խնդրակենտրոն հարցեր ձևակերպելու և դրանց լուծումներ առաջարկելու հնարների իմացություն: 8.4.3 Ձևավորի անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ: 8.4.4 Ցուցադրի սեփական գործունեությունը պլանավորելու, ժամանակը և այլ ռեսուրսներ արդյունավետ տնօրինելու կարողություններ: 8.4.5. Իրականացնի նպատակային ուսումնասիրություն՝ ընտրելով պիտանի մեդիա նյութեր, տեսակավորելով տեղեկությունները և փաստագրելով արդյունքները: 8.4.6. Իրողությունները դասակարգի ըստ ժամանակային, տարածական և կառուցվածքային կապերի՝ օգտագործելով կողմնորոշող գիտելիք (օրինակ՝ մտքի քարտեզագրում, պատմական փաստեր և այլն): 8.4.7 Հիմնավորի թիմային աշխատանքի արդյունավետությունը, տարբեր կարողություններ ունեցող մարդկանց համագործակցության առավելությունները՝ գիտակցելով անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը:
Թեմայի բովանդակություն

1. Աշխատանք թիմերում: Թիմերի ձևավորման փուլեր:
2. Առաջնորդություն: Առաջնորդության ձևերը:
3. Հարցեր, հարցեր, հարցեր:
4. Խնդրի ձևակերպում, լուծման քայլեր և փոխզիջումային լուծումներ:
5. Նախագծային աշխատանք:
6. Ռեսուրսների կառավարում:

Ուղղորդող հարցեր

1. Ինչպիսի՞ն պիտի լինի առաջնորդը:
2. Ինչպե՞ս ձևակերպել խնդիրներ, հարցեր:
3. Ինչպե՞ս օգտվել տարբեր աղբյուրներից և օգտագործել մտքի ձևակերպման տարբեր ձևաչափեր (քարտեզագրում, ժամանակագրություն, գծապատկերում):
4. Ի՞նչ քայլերից է բաղկացած նախագծային աշխատանքը:
5. Ինչո՞ւ են կարևոր թիմային աշխատանքը և ժամանակի կառավարումը:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Դերային խաղ առաջնորդության վերաբերյալ: Ուսումնասիրել համայնքում առկա հիմնախնդիրները: Ուսումնասիրել հիմնախնդիրներին առնչվող հանրային քաղաքակությունը: Օգտվելով տեղեկատվական տարբեր աղբյուրներից՝	● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկի առաջնորդությունը, խնդիրները անհատների, խմբերի հարաբերությունների համատեքստում:

համադրել տեղեկատվությունը տարբեր տեսանկյուններից, հիմնավորել աղբյուրի արժանահավատությունը: Անցկացնել հարցազրույցներ հիմնախնդրի վերաբերյալ:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հանրահաշիվ - Հաշվարկներ, խնդիրների ստեղծում: **Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն** - Առաջնորդության խնդիրը պատմության մեջ:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ27, Հ29	

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող ժամաքանակ 34 ժամ)

Պետություն

Հասարակագիտություն
Թեմա 1. Պետություն. ներածություն (5 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան բացատրել պետության նշանակությունը, ինչպես նաև գնահատել քաղաքացի–պետություն փոխհարաբերությունը: Կկարողանան վերլուծել կոռուպցիայի առաջացման պատճառները և բացասական հետևանքները հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա, տարբերակել կոռուպցիայի տարբեր տեսակներ և դրսևորումներ:
Վերջնարդյունք
9.1.1 Թվարկի պետության հատկանիշներն ու գործառույթները: 9.1.2 Մեկնաբանի «պետություն» և «քաղաքացի» հասկացությունները և ցույց տա դրանց փոխկապակցությունները: 9.1.3. Բացատրի հանրային (պետական) իշխանության էությունը, դրա անհրաժեշտությունը և աղբյուրները: 9.1.4 Մեկնաբանի կոռուպցիայի առաջացման պատճառները և բացասական ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա:
Թեմայի բովանդակություն
1. Պետության հատկանիշները: 2. Պետության գործառույթները: 3. Պետական կարգ, պետության կառուցվածք և պետական կառավարման ձև: 4. Պետություն և քաղաքացի: 5. Կոռուպցիա. ծագման պատճառները և հետևանքները, տեսակները և դրսևորումները:
Ուղղորդող հարցեր
1. Ի՞նչ հատկանիշներով է պետությունը տարբերվում սոցիալական մյուս ինստիտուտներից:

2. Որո՞նք են պետության հիմնական գործառույթները ներհասարակական և միջազգային հարաբերությունների ոլորտներում:
3. Ինչպե՞ս են փոխկապակցված պետությունը և նրա քաղաքացին, ի՞նչ նշանակություն ունի քաղաքացին պետության և պետությունը՝ քաղաքացու համար:
4. Ո՞ր հատկանիշներն են բնութագրում կոռուպցիան: Ի՞նչ դրսևորումներ/տեսակներ ունի կոռուպցիան:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակային խնդիրներ Օրինակների միջոցով ցույց տալ պետության հիմնական հատկանիշներից յուրաքանչյուրի նշանակությունը հասարակական կյանքում: Հիմնավորել, թե ինչու են պետության մի շարք հատկանիշներ համարվում ոչ հիմնական: Օրինակների միջոցով ցույց տալ պետության նշանակությունը քաղաքացու համար և հակառակը: **Խմբային քննարկումներ** Օրինակների միջոցով ցույց տալ կոռուպցիայի տարբեր	● **Համակարգ** Դիտարկել պետությունը որպես հասարակական կյանքի կազմակերպման բարձր մակարդակ:

տեսակների բացասական ազդեցությունն իր և հասարակության կյանքի վրա: **Նախագծային աշխատանք** Օգտագործելով տեղեկատվական տարբեր աղբյուրներ՝ ուսումնասիրել Հայաստանում կոռուպցիոն իրավիճակը՝ հիմնվելով տարբեր միջազգային ուսումնասիրությունների և համաթվերի վրա:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն - Պետության ձևերը պատմական ժամանակներում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17	

Հասարակագիտություն
Թեմա 2. Պետություն և մշակույթ (6 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան բացատրել «մշակույթ» հասկացությունը, դրա ազդեցությունը հանրային կյանքի վրա: Կկարողանան մեկնաբանել պետություն-մշակույթ փոխազդեցությունները: Կնկարագրեն Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի

առանձին արժեքավոր նմուշներ:
Վերջնարդյունք
9.2.1. Նկարագրի «մշակույթ» հասկացությունը, դրա առանձնահատկությունները: 9.2.2 Մեկնաբանի մշակույթ-պետություն փոխազդեցությունները: 9.2.3. Դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ: 9.2.4 Ճանաչի ազգային մշակույթը, նյութական և հոգևոր ժառանգությունը և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:
Թեմայի բովանդակություն
1. Մշակույթի ազդեցությունը հանրային կյանքի վրա: 2. Մշակույթը՝ որպես ապրելակերպ և նյութական, հոգևոր արժեքների ամբողջություն: 3. Հայաստանի մշակույթը համաշխարհային մշակույթի համատեքստում: 4. Մշակույթը՝ որպես սոցիալական փոփոխությունների գործընթացի շարժիչ ուժ կամ խոչընդոտ:
Ուղղորդող հարցեր 1. Ինչո՞ւ է մշակույթը համարվում պետության այցեքարտը: 2. Ինչպիսի՞ դրսևորումներ ունի մշակույթը: 3. Ի՞նչ է տալիս մշակույթի, հատկապես ազգային մշակույթի իմացությունը քաղաքացուն: 4. Ինչպե՞ս է ազդում մշակույթը հասարակական փոփոխությունների վրա:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Ուսումնասիրել և ներկայացնել հայ ժողովրդի, Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակույթի նմուշներ: Դիտարկել կրոնը որպես մշակույթի կարևոր տարր՝ կարևորելով քրիստոնեության մշակութային ժառանգությունը:	• **Կայունություն և փոփոխություն** Մշակույթը՝ որպես հասարակական կայունության և փոփոխության հիմք:

Ուսումնասիրել Հայաստանի արվեստի տարբեր ճյուղերի գործեր և դրանք ներկայացնել պետականության հետ առնչության մեջ:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն - Մշակույթի փոփոխությունն ու ազդեցությունը հասարակության վրա: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի մեկնաբանում: **Արվեստ** - Գեղարվեստի, երաժշտության, թատրոնի, կինոյի, առօրեական մշակույթի ներկայացում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17, Հ45, Հ46	

Հասարակագիտություն
Թեմա 3. Պետություն և քաղաքացիական հասարակություն (7 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան մեկնաբանել քաղաքացիական հասարակության նշանակությունը: Կկարողանան գնահատել քաղաքացիական հասարակության և պետական իշխանության ինստիտուտների փոխգործակցության անհրաժեշտությունը հանրային բարիքի ստեղծման համար:
Վերջնարդյունք
9.3.1.Բացատրի քաղաքացիական հասարակության նշանակությունը պետական իշխանության գործունեության վերահսկողության խնդրում: 9.3.2. Բացատրի պետական իշխանության և քաղաքացիական հասարակության

ինստիտուտների փոխազդեցությունը հանրային բարիքի ստեղծման գործում: 9.3.3. Հասկանա և բացատրի հասարակական կազմակերպությունների, շարժումների, միությունների, ՀԼՄ-ների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը շահերի պաշտպանության, բազմազանության և բազմակարծության ապահովման առումով:
Թեմայի բովանդակություն
1. Քաղաքացիական հասարակության բաղադրիչները և գործառույթները: 2. Շահերի պաշտպանություն և բազմակարծություն: 3. Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները: 4. Քաղաքացիական հասարակության և պետական իշխանության փոխազդեցությունները. հանրային բարիք:
Ուղղորդող հարցեր
1. Որո՞նք են քաղաքացիական հասարակության գործառույթները քաղաքացու և սոցիալական ինստիտուտների փոխհարաբերություններում: 2. Ինչպե՞ս են փոխազդում քաղաքացիական հասարակությունը և պետությունը, ի՞նչ նշանակություն ունի այդ փոխազդեցությունը հասարական հարաբերությունների համար: 3. Քաղաքացիների անհատական և խմբային շահերի պաշտպանության ի՞նչ ձևեր ու մեխանիզմներ կան: 4. Ո՞րն է ՀԼՄ–ի նշանակությունը և որո՞նք են դրա գլխավոր գործառույթները, ինչպե՞ս են դրանք առնչվում մարդու իրավունքներին:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Նախագծային աշխատանք Համայնքային հիմնախնդիրներն ուսումնասիրել քաղաքացիական հասարակության հաստատությունների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների միջոցով: Օրինակների միջոցով հիմնավորել	● **Օրինաչափություն**: Ուսումնասիրել քաղաքացիական հասարակության ինստիտուտների և պետական ու համայնքային իշխանության մարմինների փոխազդեցությունները, դրանց ազդեցությունն անհատի վրա: ● **Կառուցվածք և գործառույթ**

տեղեկացվածության կարևորությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: Տրված տեղեկություններով ներկայացնել պատմությունը տարբեր դերերով, տարբեր լսարանների համար՝ հաշվի առնելով լուրի աղբյուրն ու լսարանը, դրանով պայմանավորված ոճը և լեզուն:	Ուսումնասիրել քաղաքացիական հասարակության կառուցվածքը՝ դրա գլխավոր ինստիտուտները և դրանց հիմնական գործառույթներն անհատի ինքնաիրացման, նրա շահերի ու իրավունքների պաշտպանության տեսանկյուններից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն - Պատմական տեքստի մեկնություն, սկզբնաղբյուրի ուսումնասիրում: **Գրականություն** - Համապատասխան տեքստի մեկնաբանություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17, Հ23, Հ40	

Հասարակագիտություն
Թեմա 4. Պետություն և տնտեսություն (7 ժամ) **Պետության տնտեսական քաղաքականության բովանդակությունը**
Նպատակ
Սովորողները կմեկնաբանեն տնտեսական համակարգերի գործունեության մեխանիզմները, շուկայական տնտեսության առանձնահատկությունները: Սովորողները կգիտակցեն առանձին իրավիճակներում շուկայական տնտեսության գործունեության հետ կապված խնդիրները (շուկայի ձախողումները) և պետության դերը այդ խնդիրների վերացման գործում: Կմեկնաբանեն պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների դերը հասարակական բարեկեցության տեսանկյունից ու կիմանան՝ որոնք են ՀՀ-ում պատասխանատու մարմինները:

Վերջնարդյունք
9.4.1. Բացատրի, թե ինչպես են գործում տնտեսական համակարգերը: Ներկայացնի հայաստանյան տնտեսական և ֆինանսական համակարգերը, տարբերակի վերջիններիս մասնակիցներին ու նրանց դերերը: 9.4.2. Ուրվագծի պետության դերը տնտեսության մեջ, հասկանա պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների անհրաժեշտությունն առանձին իրավիճակներում: 9.4.3. Հիմնավորի մրցակցության դերը շուկայական տնտեսությունում: Քննարկի հակամրցակցային գործունեության բացասական ազդեցությունը տնտեսության վրա:
Թեմայի բովանդակություն
1. Տնտեսական համակարգեր, Հայաստանի տնտեսական և ֆինանսական համակարգերը: 2. Շուկայական տնտեսություն, շուկայի ձախողումներ: 3. Պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության բովանդակությունը:
Ուղղորդող հարցեր
1. Ինչպիսի՞ տնտեսական համակարգեր գոյություն ունեն: 2. Որո՞նք են շուկայական տնտեսության առանձնահատկությունները: 3. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն Հայաստանի տնտեսական եւ ֆինանսական համակարգերը: Որո՞նք են դրանց մասնակիցները: 4. Ե՞րբ է պետությունը միջամտում տնտեսությանը և ինչպե՞ս:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակային խնդիրներ Իրավիճակներ, երբ պետությունն իրականացնում է տնտեսական և	• **Կայունություն և փոփոխություն** Հայաստանում տնտեսական որոշումների կայացման առանձնահատկությունները:

սոցիալական քաղաքականություն, որպեսզի վերականգնի տնտեսական/սոցիալական արդարությունը կամ հավասարությունը: Ուսումնասիրել Հայաստանի տնտեսական և ֆինանսական համակարգերը և համեմատել այլ երկրների հետ:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Տնտեսական համակարգերի պատմական զարգացում: **Հանրահաշիվ** - Հաշվարկներ և խնդիրների ստեղծում: **Աշխարհագրություն** – Բնակչություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17, Հ20, Հ21	

Հասարակագիտություն
Թեմա 5. Պետություն և քաղաքականություն (6 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան գնահատել քաղաքական մշակույթի և թափանցիկ կառավարման համակարգի ազդեցությունը քաղաքացու իրավունքների, ազատությունների և

օրինական շահերի իրացման վրա: Սովորողները կկարողանան թվարկել և օրինակների միջոցով համեմատել Հայաստանի պետական իշխանության ճյուղերի հիմնական գործառույթները:
Վերջնարդյունք
9.5.1 Մեկնաբանի քաղաքական մշակույթի և վարչակարգի տիպը, քաղաքական, քաղաքացիական մասնակցության ձևերը քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման տեսանկյունից: 9.5.2 Դատողություններ անի բազմակարծիք և մասնակցային մշակույթի բնորոշ գծերի մասին: 9.5.3 Բացատրի էլեկտրոնային կառավարման նշանակությունը ժողովրդավարական գործընթացներում: 9.5.4 Տարբերակի Հայաստանի պետական իշխանության ճյուղերի լիազորությունները 9.5.5 Ուրվագծի օրենքների ստեղծման ընթացակարգը և դրա վրա ազդեցություն գործելու մեխանիզմները Հայաստանում:
Թեմայի բովանդակություն
1. Քաղաքական մշակույթ: 2. Ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական համակարգեր: 3. Իշխանության ճյուղերի տարանջատման և հավասարակշռման սկզբունքները ժողովրդավարական պետությունում: 4. ՀՀ սահմանադրական կարգը և պետական իշխանության ճյուղերի գործառույթները: 5. Թափանցիկ և հաշվետու կառավարում: Էլեկտրոնային կառավարումը՝ թափանցիկության գործիք:
Ուղղորդող հարցեր
1. Որո՞նք են քաղաքական մշակույթի տեսակների տարբերությունները մարդու իրավունքների տեսանկյունից: 2. Որո՞նք են Ժողովրդավարական կառավարման ներկայացուցչական և մասնակցային տեսակների առավելություններն ու թերությունները մարդու իրավունքների

տեսանկյունից: 4. Ո՞րն է պետական իշխանության ճյուղերի տարանջատման և հավասարակշռման սկզբունքների նշանակությունը ժողովրդավարական պետություններում: 5. Որո՞նք են թափանցիկ և հաշվետու կառավարման սկզբունքները:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Հետազոտական աշխատանք Հիմնավորել քաղաքական մշակույթի տիպերի ազդեցությունը հանրային հարաբերությունների վրա: Համեմատել ոչ ժողովրդավարական և ժողովրդավարական կառավարման համակարգեր՝ ցույց տալով պետական իշխանության ճյուղերի բաժանման և փոխզսպման նշանակությունը վերջինիս համար: **Օգտվելով երաշխավորված աղբյուրներից՝** 1. Դասակարգել ՀՀ պետական իշխանության մարմինների սահմանադրական գործառույթները և ցույց տալ իշխանության ճյուղերի տարանջատման ու փոխզսպման սկզբունքների դրսևորման ձևերը:	• **Օրինաչափություն** Քաղաքական մշակույթի և կառավարման ռեժիմի փոխկապվածությունը: • **Կառուցվածք և գործառույթ** Ուսումնասիրել պետական իշխանության ճյուղերի տարանջատումը, դրանց լիազորություններն ու փոխհարաբերությունները, պետական իշխանության տարածքային կազմակերպումը:

2. Նկարագրել և մեկնաբանել խորհրդարանի ներկայացուցչական, օրենսդիր և վերահսկողական գործառույթները:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Տնտեսական համակարգեր: **Գրականություն** - Համապատասխան տեքստի մեկնաբանում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Հ17, Հ40	

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող ժամաքանակ 68 ժամ)

Հասարակագիտական մտքի հիմունքներ

Հասարակագիտություն
Թեմա 1. Մտածողության մոդելներ (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան տրամաբանական գործողություններ կատարել, հիմնավորել քննադատական և ստեղծագործական մտածողության կարևորությունը: Կբացատրեն մտածողության հմտությունները, իմացական և սոցիալական պատրանքները՝ դրանք կապակցելով կյանքի հետ:
Վերջնարդյունք
10.1.1. Կիրառի մտածողության տարբեր ձևեր, մոդելներ կոնկրետ օրինակների վրա: 10.1.2. Հիմնավորի քննադատական և ստեղծագործական մտածողության կարևորությունը ժամանակակից աշխարհում: 10.1.3. Բացատրի մտածողության հմտությունները և կիրառի դրանք կոնկրետ օրինակների վրա:
Թեմայի բովանդակություն
1. Մտահանգում: 2. Քննադատական մտածողություն: 3. Ստեղծագործական մտածողություն: 4. Մտածողության հմտություններ. դիրքորոշման հիմնավորում, պատճառահետևանքային կապերի պարզում, համեմատություն: 5. Իմացական և սոցիալական պատրանքներ. Հալո էֆեկտ, խմբային մտածողություն, IKEA էֆեկտ, Զեյգարնիկի էֆեկտ, սփռման էֆեկտ:

Ուղղորդող հարցեր 1. Որո՞նք են եզրակացություններ անելու տրամաբանական կանոնները: 2. Ինչո՞ւ է քննադատական և ստեղծագործական մտածողությունը դժվար տրվում մարդուն: Ի՞նչ է պետք քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու համար: 3. Ինչպե՞ս կիրառել մտածողության տարբեր հմտություններ: 4. Ինչպե՞ս դիմակայել իմացական և սոցիալական պատրանքներին:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակային խնդիրներ Իրավիճակների ուսումնասիրության միջոցով մտածողության հմտությունների ուսուցում: Էսսեի շարադրում քննադատական և ստեղծագործական մտածողության կիրառմամբ:	**Համակարգեր և մոդելներ** Մտածողության՝ որպես համակարգի ըմբռնումը և մտածողության տարբեր մոդելների կիրառումը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Արվեստ - Ստեղծագործական տարբեր դրսևորումների համադրում: **Լեզուներ և գրականություն** - Տեքստի շարադրում և վերլուծություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ19, Մ24, Մ27, Մ34	

Հասարակագիտություն
Թեմա 2. Մարդ և հասարակություն (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կվերլուծեն ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրները

տարբեր հասարակական գիտությունների տեսանկյունից՝ արտահայտելով իրենց դիրքորոշումները: Կկարողանան հետևություններ անել հասարակական փոփոխությունների վրա ազդող գործոնների վերաբերյալ:
Վերջնարդյունք
10.2.1 Նկարագրի մարդու հիմնախնդիրը հասարակական տարբեր գիտությունների տեսանկյունից: 10.2.2 Ներկայացնի մարդու և հասարակության մասին առանցքային տեսությունների հիմնադրույթները: (Պլատոն, Արիստոտել, Դավիթ Անհաղթ, Նարեկացի, Մարքս, Նիցշե, Էքզիստենցիալիզմ, Ֆրանկֆուրտյան դպրոց): 10.2.3 Մեկնաբանի մարդու սոցիալականացման և հասարակական փոփոխությունների գործընթացները: 10.1.4 Բացատրի անհատականի և հասարակականի միջև առկա լարումը՝ որպես մարդու կյանքի առանձնահատկություն:
Թեմայի բովանդակություն
1. Մարդու հիմնախնդիրը: 2. Մարդ էակի հիմնական բնութագրերը: 3. Մարդը՝ որպես գեղագիտության, բարոյագիտության, հոգեբանության, տնտեսագիտության, քաղաքագիտության, իրավագիտության և փիլիսոփայության ուսումնասիրման առարկա: 4. Մարդու և հասարակության մասին տեսություններ: 5. Անձնական և հանրային շահեր: Հանրային բարիք: 6. Հասարակական փոփոխությունների վրա ազդող գործոնները. տեխնոլոգիաներ, մշակույթ, գաղափարներ, կոլեկտիվ գործողություններ:
Ուղղորդող հարցեր
1. Ինչպե՞ս են դիտարկում մարդու խնդիրը հասարակական տարբեր գիտություններ: 2. Արդյո՞ք հնարավոր է ունենալ հասարակություն, որում չլինեն տարակարծություններ, լարվածություններ տարբեր մարդկանց և խմբերի միջև:

3. Ինչպե՞ս են դիտարկել մարդ-հասարակություն հարաբերություններն անցյալում հայտնի փիլիսոփաները: 4. Ինչպե՞ս են ազդում տեխնոլոգիաները, մշակույթը, գաղափարները, կոլեկտիվ գործողությունները հասարակական փոփոխությունների վրա:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Քննարկումներ Որո՞նք են հասարակագիտական մտքի առանցքային և արդիական գաղափարները: **Հետազոտական աշխատանքներ** Տարբեր սկզբնաղբյուրներից քաղել տեղեկություններ, վերլուծել, եզրակացություններ անել և համապատասխան հղումներ անել:	- **Համակարգեր և մոդելներ** Հասկանա հասարակագիտական մտքի էվոլյուցիան:

Միջառարկայական կապերը թեմայում
Գրականություն - Տեքստի մեկնաբանում ու վերլուծում: **Աշխարհագրություն** - Բնական միջավայրի ազդեցությունը մարդու և հասարակության վրա (աշխարհագրական դետերմինիզմ):
Հանրակրթական չափորոշիչ
Մ23, Մ36, Մ39, Մ40

Հասարակագիտություն
Թեմա 3. Իրավական մտքի զարգացում (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան համադրել և հակադրել իրավունքի առաջացման ուսմունքները,

առանձնացնել իրավունքի աղբյուները և հիմնական ճյուղերը: Կմեկնաբանեն դրանց նշանակությունը և կարգավորման ոլորտը, ինչպես նաև կքննեն իրավական համակարգերի ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:
Վերջնարդյունք
10.3.1 Դատողություններ անի իրավական մտքի դպրոցների զարգացման արդյունքում առաջ եկած ուսմունքների վերաբերյալ: 10.3.2 Առանձնացնի իրավունքի աղբյուները (այդ թվում նաև հայ իրավունքի աղբյուները), մեկնաբանի դրանց տեսակները և առաջացումը: 10.3.3 Բացատրի իրավունքի համակարգը՝ համադրելով այն հասարակական հարաբերությունների հետ: 10.3.4 Տարբերակի իրավունքի հիմնական ճյուղերը՝ մեկնաբանելով դրանցից յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրիչները, խնդիրները և կարգավորման ոլորտը:
Թեմայի բովանդակություն
1. Իրավական մտքի զարգացում և գաղափարախոսություններ: 2. Սոցիալ-բարոյական և հասարակական նորմեր և իրավունքներ: 3. Իրավունքի աղբյուրներ: 4. Իրավունքի համակարգ: 5. Իրավունքի ճյուղեր:
Ուղղորդող հարցեր
1. Որո՞նք են իրավունքի ծագման հիմնական ուղղությունները (որոնցից կարելի է բխեցնել իրավունքը): 2. Որո՞նք են իրավունքի աղբյուները (ներպետական մակարդակում, որոնք են դրա տեսակները): Ի՞նչ են իրավական սովորույթը, նորմատիվ իրավական ակտերը: Ի՞նչ է իրավասուբյեկտությունը: 3.Որո՞նք են համակարգի բաժանման չափանիշները և ի՞նչ ոլորտներ կարող են կարգավորել: 4. Որո՞նք են իրավունքի ճյուղերը, ի՞նչ հատկանիշներով և ինչպե՞ս են դրանք իրարից

առանձնանում:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Վերլուծել իրավունքի փոխհարաբերություններն ու դրանց կապը սոցիալ-բարոյական նորմերի հետ: Տարբեր իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն: Դերախաղեր և սիմուլյացիոն խաղեր իրավական մտքի տարբեր ուսմունքների վերաբերյալ:	**Արդարություն և զարգացում** Ուսումնասիրել իրավունքի ծագումը, դրա աղբյուրներն ու համակարգը՝ մեկնաբանելով տարբեր ժամանակներում դրանց ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Իրավական նորմերի ուսումնասիրում պատմական տարբեր ժամանակներում ու տարբեր քաղաքակրթություններում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ34, Մ35, Մ36	

Հասարակագիտություն
Թեմա 4. Շուկայական տնտեսություն (8 ժամ)
Նպատակ
Սովորողը կկարողանա ներկայացնել տնտեսական ռեսուրսների և արտադրական գործոնների տեղաբաշխումը, վերլուծել առաջարկն ու պահանջարկը և մրցակցությունը: Սովորողը կբնութագրի մրցակցային շուկան, կթվարկի նրա վրա ազդող ներքին և արտաքին գործոնները: Կմեկնաբանի տնտեսական հիմնական ցուցանիշները և կկարևորի դրանց հետևելը տնտեսության ու շուկայի մասին տեղեկացված լինելու հարցում:
Վերջնարդյունք
10.4.1.Նկարագրի, թե ինչպես են տեղաբաշխվում և օգտագործվում տնտեսական

ռեսուրսները, արտադրական գործոնները, նկարագրել դրանց տեղաբաշխման ազդեցությունը տնտեսական և սոցիալական բարեկեցության վրա: 10.4.2.Վերլուծի, թե ինչպես են աշխատում մրցակցային շուկաները: 10.4.3. Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը շուկայի վրա: 10.4.4.Վերլուծի և մեկնաբանի տնտեսական հիմնական ցուցանիշները:	
Թեմայի բովանդակություն	
1. Տնտեսական ռեսուրսներ և արտադրական գործոններ: 2. Տնտեսական համակարգեր: 3. Շուկայական գին և շուկայական մրցակցություն, մենաշնորհ: 4. Շուկայի վրա ազդող գործոններ: 5. Տնտեսական հիմնական ցուցանիշներ:	
Ուղղորդող հարցեր	
1. Ինչպե՞ս են ձևավորվում առաջարկը և պահանջարկը, ինչպե՞ս է հաստատվում հավասարակշռությունը շուկայում: 2. Ի՞նչ է տեղի ունենում, երբ առաջարկը կամ պահանջարկը փոխվում են: 3. Ի՞նչ նպատակով են տնտեսվարողները խախտում տնտեսական մրցակցությունը: Ինչո՞ւ է կարևոր այն վերականգնելը, ինչպե՞ս կարելի է դա իրագործել: 4. Որո՞նք են տնտեսական հիմնական ցուցանիշները, ինչպիսի՞ տեղեկություն են դրանք փոխանցում, ինչպե՞ս կարելի է ստանալ դրանք և մեկնաբանել:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Տվյալների հավաքում և վերլուծություն Տնտեսական ցուցանիշները վերջին մեկ տարում (գնաճ, գործազրկություն, տնտեսական աճ). ինչո՞վ է	• **Կայունություն և փոփոխություն** Տնտեսական ռեսուրսներ, արտադրական գործոնների տեղաբաշխում: Առաջարկ, պահանջարկ և մրցակցություն:

պայմանավորված տվյալ պատկերը: **Իրավիճակային խնդիրներ** Ձեռնարկությունն ինչպե՞ս պետք է ընտրի ու տեղաբաշխի տնտեսական ռեսուրները: Այդ ռեսուրսներով կազմի արտադրական հնարավորությունների կոր ու մեկնաբանի:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հանրահաշիվ - Հաշվարկների կատարում և խնդիրների ստեղծում: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Կառավարման ձևեր և տնտեսական մոդելներ: **Աշխարհագրություն** - Տնտեսական մոդելներ, բնակչություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ22	

Հասարակագիտություն
Թեմա 5. Անձնական ֆինանսների կառավարում (8 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան կայացնել կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունավետ,

պատասխանատու և անվտանգ ֆինանսական որոշումներ: Կկարողանան բացատրել խնայողությունների և պարտքերի դերն ու արդյունավետ կառավարելու մոտեցումները: Կճանաչեն ֆինանսական ոլորտում իրենց իրավունքներն ու պարտականությունները:
Վերջնարդյունք
10.5.1. Կայացնի ֆինանսական որոշումներ՝ ըստ գնի, որակի, հանգամանքների, ռիսկերի, համեմատի ֆինանսական ծառայությունները: 10.5.2. Հիմնավորի խնայողությունների արդյունավետ կառավարման նշանակությունը, նկարագրի խնայողությունները տեղաբաշխելու հնարավորությունների առանձնահատկությունները: 10.5.3. Փաստարկի պարտքի արդյունավետ կառավարման նշանակությունը: 10.5.4. Ներկայացնի սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները: 10.5.5. Նկարագրի ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների տեսակները, դրանցից խուսափելու կամ արդեն առաջացած հետևանքները մեղմելու մեխանիզմները:
Թեմայի բովանդակություն
1. Ֆինանսական որոշումներ՝ ըստ գնի, որակի, ռիսկերի: 2. Ֆինանսական ծառայությունների համեմատություն և ընտրություն: 3. Խնայողությունների կառավարում: 4. Վարկերի կառավարում: 5. Սպառողների իրավունքների պաշտպանություն: 6. Ֆինանսական խարդախություններ ու զեղծարարություններ:
Ուղղորդող հարցեր
1. Ի՞նչը կարող է մարդկանց ուղղորդել որոշումներ կայացնելիս (խորհուրդ, գին, որակ, գովազդ, ռիսկայնության մակարդակ և այլն): 2. Ինչպե՞ս ենք ընտրում ֆինանսական ծառայություններ, ո՞րն է դա անելու արդյունավետ եղանակը: 3. Ինչի՞ համար են խնայողությունները, և ինչպե՞ս կարելի է դրանք արդյունավետ

կառավարել: 4. Ինչի՞ համար են պարտքերը, և ինչպե՞ս կարելի է դրանք արդյունավետ կառավարել: 5. Ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ ֆինանսական կազմակերպությունների և սպառողների միջև, ինչպե՞ս կարող են դրանք լուծվել: 6. Ի՞նչ կտա ֆինանսական խարդախությունները և զեղծարարությունները բացահայտելը: Ինչպե՞ս կարելի է պաշտպանվել դրանցից:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Աշխատանքներ գրաֆիկներով և աղյուսակներով «Ո՞րն է ապրանքի տեղը». Գին/որակ գրաֆիկի վրա ամրացնել հայտնի ապրանքների տարբերանշանները: **Ուսուցողական ֆիլմերի դիտում ու քննարկում** **Այցելություններ** Կազմակերպել այցելություն բանկ կամ վարկային կազմակերպություն: **Հաշվարկային վարժություններ** Վարժություն վարկի գինը հաշվարկելու նպատակով.	● **Կառուցվածք և գործառույթ** Ֆինանսական որոշումներ: Ֆինանսական կազմակերպություններ և սպառողներ:

հաշվարկել, թե ինչ կարժենա, եթե վարկ ես վերցնում 5 000 000 ՀՀ դրամ 10%-ով և 8 տարի ժամկետով (բացատրել, որ բարդ տոկոսի դեպքում ավելի շատ տոկոսագումար են վճարում): Քննարկումներ Վարկ վերցնելու և երաշխավոր դառնալու խելամիտ և ոչ խելամիտ որոշումները: Ինչպե՞ս և որքա՞ն պետք է խնայել երազանքն իրականացնելու համար: Ո՞ր դեպքերում կարող են տրամադրել լավ և վատ պայմաններով վարկ կամ ընդհանրապես մերժել վարկի տրամադրումը: **Նախագծային, հետազոտական աշխատանքներ** Տարվա կտրվածքով լրատվական աղբյուրներից քաղել զեղծարարությունների և	

խարդախությունների օրինակներ (բանկոմատով, վճարային քարտերով, առցանց զեղծարարություն, ֆիշինգ և այլն): Կազմել երկու սյունակից բաղկացած աղյուսակ, որոնցից մեկում կնշվի, թե ինչի պատճառով է անձը ֆինանսական զեղծարարության զոհ դարձել, իսկ մյուսում՝ ինչպես կարելի է խուսափել դրանից:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հանրահաշիվ, Երկրաչափություն - Չափումներ, հաշվարկներ, խնդիրների առաջադրում: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի ուսումնասիրում և մեկնաբանում:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ19, Մ27	

Հասարակագիտություն
Թեմա 6. Քաղաքական գաղափարախոսություններ (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան բացատրել քաղաքական գաղափարախոսությունների նշանակությունը հանրային կյանքում, զանազանել դրանց դասական և ժամանակակից ուղղությունները, մեկնաբանել դրանց հնարավոր ազդեցությունն անձի ինքնաիրացման և

հանրային կյանքի կազմակերպման վրա:
Վերջնարդյունք
10.6.1 Համեմատի քաղաքական գաղափարախոսությունների հիմնադրույթները՝ ցույց տալով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: 10.6.2 Բանավիճի անձի ինքնաիրացման և հանրային կյանքի կազմակերպման վրա քաղաքական գաղափարների ու գաղափարախոսությունների հնարավոր ազդեցության շուրջ: 10.6.3 Համեմատի ազգայնականության, ազգայնամոլության և ռասիզմի առանձնահատկությունները՝ ցույց տալով դրանց տարբերություններն ու ընդհանրությունները 10.6.4 Բանավիճի ազգայնականության քաղաքացիական և էթնիկական ձևերի պատմական նշանակության շուրջ:
Թեմայի բովանդակություն
1. Գաղափարախոսություն. բնորոշումները և տեսակները: 2. Դասական քաղաքական գաղափարախոսություններ: 3. Քաղաքական գաղափարախոսությունների ժամանակակից ուղղությունները: 4. Ազգայնականություն, ազգայնամոլություն և ռասիզմ:
Ուղղորդող հարցեր
1. Որո՞նք են քաղաքական գաղափարախոսությունների մոտեցումների տարբերությունները տնտեսական կարգի (կացութաձևի), արդարության, մարդու ինքնաիրացման և հանրային բարիքի հարցերում: 2. Ինչպե՞ս են կապակցված ազգայնականությունը և հայրենասիրությունը, ինչո՞վ է տարբերվում ազգայնականությունը ազգայնամոլությունից ու ռասիզմից:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**

Գծապատկերի միջոցով համեմատել քաղաքական գաղափարախոսությունների մոտեցումները մարդ–հասարակություն–պետություն և անհատ–շուկա–պետություն փոխադարձ կապերի վերաբերյալ: **Նախագծային հետազոտական աշխատանքներ** 1. ՀՀ խորհրդարանական կուսակցությունների կուսակցական և նախընտրական ծրագրերից, առաջնորդների ծրագրային ելույթներից մեջբերել քաղաքական գաղափարախոսությունների հիմնադրույթների դրսևորումները: 2. Ուսումնասիրել ՀՀ խորհրդարանական կուսակցությունների ծրագրերն ու դրանց առաջնորդների ծրագրային ելույթները, անցկացնել հարցազրույց կուսակցակցությունների ներկայացուցիչների հետ՝ վեր հանելով նրանց դիրքորոշումների տարբերություններն ու ընդհանրությունները մարդ–հասարակություն–պետություն և անհատ–շուկա–պետություն	● **Օրինաչափություն** Քաղաքական գաղափարախոսությունների, գաղափարախոսական հոսանքների ծագման սոցիալ-պատմական պայմաններն ու պատճառները: ●**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Քաղաքական գաղափարախոսությունների փոխակերպումներն ու փոխներթափանցումները համաշխարհայնացման ազդեցությամբ:

փոխադարձ կապերի վերաբերյալ:	

Միջառարկայական կապերը թեմայում
Հայոց և համաշխարհային պատմություն - Սոցիալիզմ, կոմունիզմ, ֆաշիզմ, նացիզմ և այլն: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի ուսումնասիրում և մեկնաբանում: **Արվեստ** - Գաղափարախոսությունների արտացոլումն արվեստում. նկարչություն և այլն:
Հանրակրթական չափորոշիչ
Մ16, Մ36

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող ժամաքանակ 68 ժամ)

Պետական համակարգի իրավական,
տնտեսական և քաղաքական բաղկացուցիչները

Հասարակագիտություն
Թեմա 1. Պետական համակարգ և իրավունքի պաշտպանության մեխանիզմներ (8 ժամ)
Նպատակ
Սովորողները պատկերացում կունենան արդարադատության համակարգի և դատական իշխանության վերաբերյալ, ինչպես նաև կվերլուծեն առօրյա կյանքից վերցված խնդիրներ և վեճեր՝ կիրառելով իրավական հիմնավորումներ:
Վերջնարդյունք
11.1.1 Ներկայացնի Հայաստանում առկա իրավունքի համակարգը՝ քննելով իրավունքի ճյուղերն ու սահմանադրական իրավունքի դերը տվյալ համակարգում և ՀՀ հասարակության կյանքում: 11.1.3 Տարբերակի քաղաքացիական, վարչական և քրեական վարույթները՝ օրինակների վրա քննելով դրանց առանձնահատկությունները: 11.1.4 Վերլուծի դատավորների, դատախազության, ոստիկանության, իրավապաշտպանների ու փաստաբանների լիազորությունները ու անկախությունը՝ բացահայտելով յուրաքանչյուրի ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության վրա: 11.1.5 Վերլուծի քաղաքացիական և քրեական իրավունքի հիմքերը, առարկան և առանձնահատկությունները՝ քննելով դրանց զարգացման վրա ազդող գործոնները և անհատների, կառավարությունների ու դատարանների դերն այդ գործընթացում: Բացատրի իրավախախտումն ու իրավական պատասխանատվությունը:
Թեմայի բովանդակություն
1. ՀՀ իրավունքի համակարգ: 2. Դատավորներ, դատախազություն, ոստիկանություն, փաստաբաններ, իրավապաշտպաններ:

3. Վարչական, քաղաքացիական և քրեական վարույթներ:
4. Քաղաքացիական և քրեական իրավունք:

Ուղղորդող հարցեր

1. Ո՞րն է դատավորների, դատախազների, ոստիկանության, փաստաբանների և իրավապաշտպանների դերը ժողովրդավարության կայացման գործընթացում և ի՞նչ ոլորտ է կարգավորում նրանցից յուրաքանչյուրը:
2. Որո՞նք են վարչական, քրեական ու քաղաքացիական վարույթների առանձնահատկությունները և տարբերությունները միմյանցից:
3. Որոնք են իրավախախտման և իրավական պատասխանատվության տարբերություններն ու նմանությունները:

Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Պաշտոնական կայքերում ներառված իրավիճակային օրինակներով **տարբերակել** քաղաքացիական և քրեական դատավարությունների ընթացակարգային առանձնահատությունները: Մեկնաբանել և վերլուծել ՀՀ-ում կառուպցիային առնչվող իրավական խնդիրներ և իրավիճակներ: **Սիմուլյացիոն խաղեր** Անցկացնել դատական նիստեր՝ ստանձնելով տարբեր դերեր: **Այցելություններ** դատարաններ և դատական նիստերի ունկնդրում:	● **Կառուցվածք և գործառույթ** Արդարադատության համակարգ և դատական իշխանություն (վարչական, քաղաքացիական և քրեական վարույթներ, քաղաքացիական և քրեական իրավունք):

Միջառարկայական կապերը թեմայում

Հայոց և համաշխարհային պատմություն - Իրավական ակտեր, պետություն:

Հանրակրթական չափորոշիչ
Մ35, Մ36, Մ38, Մ39

Հասարակագիտություն
Թեմա 2. Պետության դերը տնտեսության մեջ (8 ժամ)
Նպատակ
Սովորողները կբացատրեն զարգացող և զարգացած տնտեսությունների տարբերությունները: Կկարողանան նկարագրել գնաճը, գործազրկությունը, զբաղվածությունը և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները: Կթվարկեն առաջարկի և պահանջարկի կարգավորման քաղաքականությունները, կմեկնաբանեն դրանց դերն ու իրագործման ուղիները:
Վերջնարդյունքը
11.2.1 Նկարագրի, թե ինչպես են զարգանում տնտեսությունները: 11.2.2 Նկարագրի ու վերլուծի գնաճը, դրա հետևանքները տնտեսության ու առանձին տնտեսավարողների վրա: 11.2.3 Նկարագրի ու վերլուծի զբաղվածության և գործազրկության ցուցանիշները, դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները: 11.2.4 Նկարագրի առաջարկի և պահանջարկի կարգավորման քաղաքականությունների նշանակությունը, բացատրի, թե ինչպես են պետական տարբեր կառույցները կիրառում այդ քաղաքականությունները:
Թեմայի բովանդակություն
1. Հարուստ և աղքատ երկրներ, ՀՆԱ և տնտեսական աճ: 2. Գնաճ. սոցիալ-տնտեսական հետևանքները: 3. Զբաղվածություն և գործազրկություն. սոցիալ-տնտեսական հետևանքները:

4. Պետության միջամտությունը տնտեսությանը.
   - Պահանջարկի կարգավորման քաղաքականություններ. հարկային, դրամավարկային քաղաքականություններ:
   - Առաջարկի կարգավորման քաղաքականություններ. արտադրողականության աճ, մրցակցության խթանում և հակամրցակցային գործունեության դեմ պայքար:

Ուղղորդող հարցեր

1. Ո՞ր երկրներն են հարուստ/զարգացած, իսկ որո՞նք՝ ոչ: Ինչո՞ւ:
2. Ինչպե՞ս են զարգանում տնտեսությունները:
3. Ի՞նչ տեղեկություն են տալիս գնաճի, գործազրկության, զբաղվածության ցուցանիշները:
4. Առաջարկի և պահանջարկի կարգավորման ինչպիսի՞ քաղաքականություններ կան, ո՞ր կառույցներն են դրանք կիրառում:

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Հետազոտական աշխատանք Նախորդ եռամսյակի կտրվածքով պարզել, թե որ ապրանքատեսակների գների փոփոխությունն է հանգեցրել գնաճի: **Հաշվարկային առաջադրանքներ** Հաշվել սպառողական գների ինդեքսի փոփոխությունը տարբեր տարիների կտրվածքով:	• **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում** • **Կայունություն և փոփոխություն**

Ուսուցողական ֆիլմերի դիտում ու քննարկում Ի՞նչ դեր ունեն հարկերը, սուբսիդիաները տնտեսական ու սոցիալական զարգացման գործում:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հանրահաշիվ - Չափումներ, հաշվարկներ, թվեր: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Հասարակական կյանք, տնտեսական մոդելներ: **Աշխարհագրություն** - Տնտեսություն, բնակչություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ19, Մ22	

Հասարակագիտություն
Թեմա 3. Քաղաքական մասնակցություն և ընտրություններ (6 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան մեկնաբանել մասնակցային ժողովրդավարության մեջ քաղաքական և քաղաքացիական մասնակցության նշանակությունը, քաղաքացիների իրավունքների և շահերի ներկայացման ու պաշտպանության ձևերը, ՀՀ պետական և համայնքային իշխանության մարմինների ընտրությունների նշանակությունը և ընթացակարգերը: Սովորողը կկարողանա ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված ընտրախախտումների դեմ պայքարի միջոցները:

Վերջնարդյունք

11.3.1. Մեկնաբանի Հայաստանի օրենսդրությամբ չարգելված քաղաքացիական և քաղաքական մասնակցության ձևերն ու տեսակները ժողովրդավարության և անձի իրավունքների ու շահերի իրացման տեսանկյուններից:

11.3.2. Նկարագրի Հայաստանում իշխանության մարմինների ընտրությունների տիպերն ու մակարդակները, ընթացակարգերը, մեկնաբանի դրանց նշանակությունը հասարակական համակարգի բնականոն գործառության, անձի քաղաքական և քաղաքացիական իրավունքների ու շահերի իրացման տեսանկյուններից:

11.3.3. Քննարկի հակասական դիրքորոշումներ, այդ թվում՝ դրանց սահմանադրականության տեսանկյունից:

11.3.4 Ներկայացնի ընտրական իրավունքի իրացման նորմերը և միջազգային չափանիշները:

11.3.5. Դատողություններ անի ընտրական իրավունքի իրացման վրա ընտրախախտումների ազդեցության և Հայաստանի օրենսդրությամբ դրանց դեմ պայքարի միջոցների մասին:

Թեմայի բովանդակություն

1. Քաղաքական գիտակցություն և սոցիալականացում:
2. Մասնակցային ժողովրդավարություն, քաղաքական և քաղաքացիական մասնակցություն:
3. Քաղաքական և քաղաքացիական մասնակցության ձևերն ու տեսակները Հայաստանում:
4. ՀՀ պետական և համայնքային իշխանության մարմինների ընտրությունները: Հանրաքվե:
5. Ընտրախախտումների տեսակներն ու դրանց դեմ պայքարը Հայաստանում:

Ուղղորդող հարցեր	
1.Ինչպե՞ս է անձի քաղաքական սոցիալականացումը կապակցում քաղաքական մշակույթը, քաղաքական գիտակցությունը և անձի քաղաքական ու քաղաքացիական մասնակցությունը: 2. Ի՞նչ նշանակություն ունի քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը մասնակցային ժողովրդավարության տեսանկյունից: 3. Ինչպե՞ս կարող է մարդկանց՝ հասարական–քաղաքական կյանքին չմասնակցելն անդրադառնալ քաղաքական վարչակարգի վրա: 4. Ինչպե՞ս են ընտրախախտումներն ազդում ընտրությունների վրա: 5. Որո՞նք են ամենահաճախ հանդիպող ընտրախախտումների տեսակները և ինչպե՞ս են դրանց դեմ պայքարում Հայաստանում:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**

Հավաստի աղբյուրների հիման վրա ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված քաղաքական և քաղաքացիական մասնակցության ձևերը: **Նախագծային հետազոտական աշխատանք** ԶԼՄ-ների հրապարակումների, դիտորդական առաքելությունների զեկույցների հիման վրա դասակարգել ու համեմատել համապետական և համայնքային վերջին երկու ընտրարշավների ժամանակ կատարված ընտրախախտումների դեպքերը: **Դերախաղ համադասարանցիների ներգրավմամբ** Մոդելավորել համապետական կամ համայնքային ընտրարշավ:	● **Օրինաչափություն** Քաղաքական սոցիալականացման ազդեցությունն անձի քաղաքական ու քաղաքացիական վարքի վրա, քաղաքացու մասնակցության նշանակությունը քաղաքական համակարգի բնականոն գործառության համար:

Միջառարկայական կապերը թեմայում
Հայոց և համաշխարհային պատմություն - Մոդելների ուսումնասիրում **Աշխարհագրություն** - Երկրներ, բնակչություն:
Հանրակրթական չափորոշիչ
Մ16

Թեմա 4. Կուսակցություններ և շահերի խմբեր (6 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան ներկայացնել բազմակարծիք հասարակության մեջ կուսակցության և շահերի խմբի ընդհանրություններն ու տարբերությունները, օրինակների միջոցով ներկայացնել դրանց գործառույթները, գնահատել դրանց նշանակությունը ժողովրդավարական հասարակարգի պայմաններում:
Վերջնարդյունք
11.4.1.Մեկնաբանի կուսակցությունների և շահերի խմբերի նշանակությունը Հայաստանի քաղաքական համակարգի գործառության, անձի քաղաքական մասնակցության, քաղաքացու շահերի արտահայտման և պաշտպանության տեսանկյուններից: 11.4.2. Համեմատի կուսակցությունների և կուսակցական համակարգերի տիպերը, ցույց տա կուսակցական համակարգերի թերություններն ու առավելությունները և կապը քաղաքական ռեժիմի տիպի հետ: 11.4.3 Բնութագրի Հայաստանի կուսակցական համակարգը:
Թեմայի բովանդակություն
1. Կուսակցություններ, շահերի խմբեր, հասարակական շարժումներ և ժողովրդավարություն: 2. Կուսակցությունների տեսակները: 3. Շահերի խմբերի տեսակները: 4. Կուսակցական համակարգեր:

Ուղղորդող հարցեր	
1.Ի՞նչ նշանակություն ունեն կուսակցություններն ու շահերի խմբերը ժողովրդավարական հասարակարգում ընդհանրապես և մասնակցային ժողովրդավարության համար՝ մասնավորապես: 2. Ինչպե՞ս են կապված կուսակցական համակարգը և քաղաքական վարչակարգը: 3. Ինչպիսի՞ն է Հայաստանի կուսակցական համակարգը: 4. Ինչո՞ւ է կարևոր կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Ուսումնասիրություններ Ուսումնասիրել կուսակցությունների ու շահերի տարբեր խմբերի իրավական կարգավիճակը և գնահատել դրա արտացոլումն իրական կյանքում: Տարբեր երկրների օրինակով ցույց տալ կուսակցական համակարգի և քաղաքական վարչակարգի փոխկապվածությունը: Դասակարգել ՀՀ խորհրդարանական և գլխավոր	● **Կառուցվածք և գործառույթ** Կուսակցությունների և շահերի խմբերի նշանակությունը քաղաքացիների շահերի ու իրավունքների պաշտպանության գործում, նրանց ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման և իրականացման գործում ● **Օրինաչափություն** Կուսակցական համակարգի տեսակի և պետական կառավարման ռեժիմի փոխկապվածությունը:

արտախորհրդարանական կուսակցությունները՝ ըստ տեսակների:	

Միջառարկայական կապերը թեմայում
Հայոց և համաշխարհային պատմություն - Հասարակական շարժումներ: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի ուսումնասիրում:
Հանրակրթական չափորոշիչ
Մ16

Հասարակագիտություն
Թեմա 5. Միջազգային իրավունք (10 ժամ)
Նպատակ

Սովորողները կկարողանան տարբերակել միջազգային իրավունքի աղբյուրները, կդիտարկեն պետությունների և միջազգային իրավունքի հարաբերությունները: Կկարողանան վերլուծել այդ հարաբերությունները ՀՀ-ում և գլոբալ խնդիրների համատեքստում:
Վերջնարդյունքը
11.5.1 Ուսումնասիրի միջազգային իրավունքի աղբյուրները և սկզբունքները՝ հիմնավորելով սկզբունքների նշանակությունը պետությունների հարաբերությունների և համագործակցության տեսանկյունից: 11.5.2 Բացատրի մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային գործառույթները և նշանակությունը՝ օգտագործելով տարբեր պատմական և ժամանակակից/առօրյա իրավիճակներ: 11.5.3 Մեկնաբանի պետության (մասնավորապես՝ ՀՀ) դերը մարդու իրավունքների պաշտպանության մեջ՝ քննելով այն պետությունների կողմից ստորագրված և վավերացված փաստաթղթերի և դրանց արդյունքում առաջ եկած պարտավորությունների համատեքստում: 11.5.4 Վերլուծի Հայաստանին առնչվող տարբեր իրավախախտումների վերաբերյալ ՄԻԵԴ որոշումների և ՄԱԿ-ի պարբերական զեկույցների նմուշներ: 11. 5. 5. Առանձնացնի միջազգային վեճերի տարբեր տեսակներ և համեմատի դրանց լուծման խաղաղ և ոչ խաղաղ մեթոդների ուժեղ և թույլ կողմերը: 11.5.6. Դատողություններ անի, թե տեխնոլոգիական զարգացումն ինչպես է ազդել արդարադատության վրա միջազգային և տեղական մակարդակում:
Թեմայի բովանդակություն
1. Միջազգային իրավունքի աղբյուրները: 2. Միջազգային իրավունքի սկզբունքները: 3. Միջազգային իրավունքի պաշտպանության միջազգային, տարածաշրջանային և տեղական մեխանիզմներ: 4. Միջազգային վեճեր: 5. Ժողովուրդները՝ որպես միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտ:
Ուղղորդող հարցեր

1. Ինչու՞ է ստեղծվել միջազգային իրավունքը: Որո՞նք են միջազգային իրավունքի սուբյեկտները: Որո՞նք են միջազգային պայմանագրերը և դրանց տեսակները: Ի՞նչ է միջազգային սովորութային իրավունքը, որո՞նք են դրա բաղկացուցիչները:
2. Ո՞րն է պետության դերը միջազգային իրավունքի զարգացման գործընթացում, որոնք են նրա պարտավորությունները:
3. Ի՞նչ դեր ունեն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային ու տեղական կառույցները: (Միջազգային կազմակերպությունների կառուցվածքը) (ՄԱԿ-ի, ՄԻԵԴ-ի և այլ կառույցների ազդեցությունը պետության վրա, որպես իրավունք ստեղծող և/կամ պաշտպանող կառույց):
4. Ո՞ր է միջազգային կազմակերպությունների դերը միջազգային վեճերի լուծման գործընթացում (ՄԱԿ-ի հիմնական գործունեության բնագավառները միջազգային վեճերի լուծման գործընթացում):

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Ուսումնասիրել Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակը վերլուծող և ներկայացնող միջազգային համաթվերը, բարոմետրերը, զեկույցներն ու ամփոփագրերը: Վերլուծել ներքին օրենսդրության և գործելակերպի օրինակներ, որոնք խախտել կամ խախտում են միջազգային օրենսդրությամբ կամ կոնվենցիաներով պաշտպանված մարդու իրավունքները : Քննել, վերլուծել և եզրահանգումներ անել տարբեր իրավական դեպքերի ու խնդիրների վերաբերյալ՝ օգտագործելով և հղումներ տալով առաջնային և երկրորդային ռեսուրսներին, ճշտելով դրանց վստահելիության մակարդակը, բերելով փաստարկներ, ապացույցներ:	● **Կառուցվածք և գործառույթ** Միջազգային իրավունքի աղբյուրներ, մարդու իրավունքների արդի հիմնախնդիրներն ու ՀՀ դերը միջազգային իրավունքի համատեքստում:

Միջառարկայական կապերը թեմայում
Հայոց և համաշխարհային պատմություն - Իրավական ակտեր, պետության ձևեր ու մոդելներ: **Աշխարհագրություն** - Բնակչություն, տնտեսություն, պետություն, իրավական նորմեր:
Հանրակրթական չափորոշիչ
Մ18, Մ21, Մ35, Մ38

Հասարակագիտություն
Թեմա 6. Միջազգային առևտուր, զարգացման տնտեսություն (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան ներկայացնել, թե ինչ է միջազգային առևտուրը: Կմեկնաբանեն պետության միջամտության դերը ազատ առևտրին: Կներկայացնեն զարգացման տնտեսագիտության առանձնահատկությունները:
Վերջնարդյունքը
11.6.1.Նկարագրի միջազգային առևտրի կառուցվածքը: Բացատրի պետության միջամտության աստիճանն առևտրին: 11.6.2.Վերլուծի միջազգային վարկերի, օգնությունների, համագործակցության դերը երկրի տնտեսական զարգացման գործում:
Թեմայի բովանդակություն
1. Միջազգային առևտուր: 2. Պետությունն ու ազատ շուկայական առևտուրը: 3. Զարգացման տնտեսություն. ֆինանսավորման արտաքին աղբյուրներ:
Ուղղորդող հարցեր

1. Ինչպե՞ս են երկրները շահում կամ տուժում միջազգային առևտրում: Ինչպիսի՞ առավելություններ կարող են ունենալ այլ երկրների նկատմամբ (համեմատական և բացարձակ):
2. Ո՞ր դեպքերում են պետությունները միջամտում միջազգային առևտրին: Ի՞նչ է պրոտեկցիոնիզմը, ինչպե՞ս է այն գործում:
3. Ինչպիսի՞ միջազգային կազմակերպություններ են գործում միջազգային առևտրի, համաշխարհային տնտեսության ոլորտներում: Ո՞րն է նրանց դերը:
4. Ի՞նչ նշանակություն ունեն միջազգային վարկերը, օգնությունները, համագործակցությունը երկրների տնտեսական զարգացման գործում:

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Հետազոտական աշխատանք Համեմատել Հայաստանի՝ վերջին երկու տարիների արտահանման և ներմուծման ցուցանիշները, ճշտել դրանց նախադրյալները համապատասխան մասնագետների հետ հարցազրույցների միջոցով:	
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Պետությունների տնտեսական համակարգը: **Հանրահաշիվ** - Հաշվարկներ, չափումներ, խնդիրների առաջադրում: **Աշխարհագրություն** - Տնտեսություն, բնակչություն:	
Հանրակրթական չափորոշիչ	

Մ19, Մ22

Հասարակագիտություն
Թեմա 7. Միջազգային հարաբերություններ և արտաքին քաղաքականություն (12 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան մեկնաբանել միջազգային համակարգի կառուցվածքը և դրա հիմնական մասնակիցների փոխազդեցության ձևերը: Կկարողանան ներկայացնել միջազգային հարաբերություններում մեծ, միջին և փոքր պետությունների արտաքին քաղաքականության հատկանիշները:
Վերջնարդյունք
11.7.1 Նկարագրի միջազգային համակարգի կառուցվածքը, դատողություններ անի միջազգային իրավանորմերի և կազմակերպությունների նշանակության վերաբերյալ: 11.7.2 Թվարկի Հայաստանի արտաքին քաղաքականության նպատակներն ու հիմնական սկզբունքները, մեկնաբանի գլխավոր գործընկերների հետ հարաբերությունների նշանակությունը Հայաստանի զարգացման համար:
Թեմայի բովանդակություն
1. Միջազգային համակարգ և աշխարհակարգ: 2. Միջազգային կազմակերպություններ, շարժումներ և միջազգային ինտեգրում: 3. Մեծ, միջին և փոքր պետությունները միջազգային համակարգում: 4. Արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն: 5. Հայաստանի արտաքին քաղաքականության նպատակներն ու հիմնական սկզբունքները:
Ուղղորդող հարցեր
1. Ո՞րն է պետությունների, միջազգային կազմակերպությունների և շարժումների նշանակությունը միջազգային համակարգում: 2. Ինչպե՞ս է բնորոշվում ժամանակակից աշխարհակարգը: Ինչո՞ւ:

3. Ինչո՞վ են տարբերվում մեծ, միջին և փոքր պետությունների միջազգային կշիռները: 4. Ինչո՞վ են տարբերվում արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը:	
Գործնական աշխատանք	**Խաչվող գաղափարներ**
Աղյուսակի միջոցով վեր հանել 1. աշխարհակարգի, 2. միջազգային կազմակերպությունների տեսակների և 3. մեծ, միջին ու փոքր պետությունների արտաքին քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները: Գործնական օրինակների միջոցով ցույց տալ արտաքին քաղաքականության տարրերի նշանակությունն անձի և հասարակության կյանքում:	• **Համակարգ** Միջազգային հարաբերությունները՝ որպես դրա մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորող համակարգ: • **Կառուցվածք և գործառույթ** Միջազգային համակարգի հիմնական բաղադրիչ–դերակատարները, պետությունների ու դրանց խմբավորումների, միջազգային կազմակերպությունների և շարժումների դերը միջազգային համակարգում: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Համաշխարհայնացման ազդեցությունը միջազգային համակարգի վրա, գլոբալ հիմնախնդիրներ և գլոբալ մարտահրավերներ:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Պետություն-պետություն համագործակցությունը: **Երկրաչափություն** - Չափումներ, հաշվարկներ, մոդելների ստեղծում:	
Հանրակրթական չափորոշիչ	

U16

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվող Ժամաքանակ 68 ժամ)

Ինքնաճանաչողություն

Հասարակագիտություն
Թեմա 1. Անձի հոգեբանություն և ներառական հասարակություն (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան բնութագրել հոգեկանի կառուցվածքն ու գործառույթները, հոգեկան գործընթացները, անձի անհատական առանձնահատկությունները: Կկարողանան հիմնավորել ներառականությունը՝ որպես անձի ձևավորման արժեքային հենք:
Վերջնարդյունքը
12.1.1. Բնութագրի հոգեկան գործընթացները: 12.1.2. Տարբերակի անձի անհատական առանձնահատկությունները: 12.1.3. Հիմնավորի ներառականության կարևորությունը հասարակական կյանքում:
Թեմայի բովանդակություն
1. Հոգեկանի կառուցվածքն ու գործառույթները: Ուղեղն ու հոգեկանը: 2. Հոգեկան գործընթացներ. զգայություններ և ընկալում: Ուշադրություն: Հիշողություն: Մտածողություն և խոսք: Երևակայություն: Կամք: 3. Անձի անհատական առանձնահատկություններ. խառնվածք և բնավորություն: Ընդունակություններ: 4. Ներառական հասարակություն և ներառող մտածողություն:
Ուղղորդող հարցեր 1. Որո՞նք են մարդու հիմնական հոգեկան գործընթացները: 2. Ինչո՞վ են տարբերվում մարդիկ: 3. Ինչո՞ւ է ներառականությունը կարևոր ժամանակակից աշխարհում:

Ուսումնական	

գործունեության տեսակ	Խաչվող գաղափարներ
Հետազոտական աշխատանքներ Օգտվելով տեղեկատվական աղբյուրներից՝ ուսումնասիրել հոգեկան գործընթացների և անձնային առանձնահատկությունների ազդեցությունը մարդու կյանքի վրա:	**Կայունություն և փոփոխություն** Հասկանա մարդու կայուն և փոփոխվող էությունը: **Համակարգեր և մոդելներ** Հասկանա մարդու հոգեկանի համակարգը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Կենսաբանություն - Մարդու կառուցվածք, զգայարաններ: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստերի մեկնաբանում	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ23, Մ24, Մ34, Մ36, Մ40	

Հասարակագիտություն
Թեմա 2. Փիլիսոփայության հիմունքներ (12 ժամ)
Նպատակ
Սովորողները կիմանան փիլիսոփայական հիմնական հարցերի և մեդիագրագիտության մասին՝ զարգացնելով քննադատական մտածողության կարողությունները: Կունենան դիրքորոշում կյանքի իմաստասիրական հարցերի վերաբերյալ:
Վերջնարդյունքը
12.2.1. Տարբերակի դիցաբանական, կրոնական, գիտական և փիլիսոփայական

աշխարհայացքները: 12.2.2 Նկարագրի աշխարհի ճանաչողության ձևերը և թվարկի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: 12.2.3 Սահմանի ճշմարտության տեսությունները: 12.2.4 Նկարագրի կյանքի իմաստի տարբեր ընկալումներ: 12.2.5 Մեկնաբանի տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակական կյանքի վրա: 12.2.6 Տարբերակի տեղեկատվության նպատակները և դրսևորի դրանք նպատակային օգտագործելու հմտություններ:
Թեմայի բովանդակություն
1. Դիցաբանական, կրոնական, գիտական և փիլիսոփայական աշխարհայացք: 2. Ի՞նչն է իրական: 3. Կամքի ազատություն: 4. Ինչպե՞ս ենք ճանաչում աշխարհը: 5. Ճշմարտության հիմնահարցը: 6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակական կյանքի վրա: 7. Տեղեկատվության նպատակները և մեդիագրագիտության հմտություններ:
Ուղղորդող հարցեր 1. Ինչո՞վ են տարբերվում դիցաբանական, կրոնական, գիտական և փիլիսոփայական աշխարհընկալումները: 2. Արդյոք կա՞ կամքի ազատություն: 3. Ինչպե՞ս է տեղի ունենում ճանաչողության գործընթացը: 4. Ինչպե՞ս է փոխվում մեր կյանքը տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությամբ:

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Էսսե դիցաբանական, կրոնական, գիտական, փիլիսոփայական աշխարհայացքներից որևէ մեկի մասին կամ դրանց	**Օրինաչափություններ** Փիլիսոփայական մտքի օրինաչափությունների ընկալում:

համեմատական վերլուծություն: **Հետազոտական աշխատանք** մարդու և հասարակության վրա տեխնոլոգիաների ազդեցության մասին:	

Միջառարկայական կապերը թեմայում
Արվեստ - Արտացոլանքը արվեստում՝ նկարչություն, երաժշտություն և այլն: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Հավատ, կրոն, աթեիզմ և այլն: **Գրականություն** - Համապատասխան տեքստի մեկնաբանում:
Հանրակրթական չափորոշիչ
Մ24, Մ27, Մ34

Հասարակագիտություն
Թեմա 3. Մարդու կյանքի բաղկացուցիչները (8 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան հիմնավորել խաղի, ուսման, աշխատանքի, հանգստի դերը մարդու կյանքում: Կբացատրեն ազատության, երջանկության, հավատի, սիրո, բարոյական արժեքների փոխազդեցությունները: Օրինակների միջոցով կներկայացնեն տարբեր ժամանակաշրջաններում գեղագիտական իդեալների փոխակերպումները:
Վերջնարդյունքը
12.3.1. Համադրի խաղի, ուսման, աշխատանքի, հանգստի արժեքը մարդու կյանքում: 12.3.2 Օրինակների հիման վրա դատողություններ անի մարդու կյանքում ազատության, երջանկության, հավատի, սիրո, բարոյական արժեքի մասին: 12.3.3. Օրինակների հիման վրա ներկայացնի գեղագիտական իդեալի և ճաշակի փոխակերպումները պատմության ընթացքում:

Թեմայի բովանդակություն
1. Մարդը՝ որպես գործող էակ: 2. Խաղը, ուսումը, աշխատանքը, ազատ ժամանակը՝ որպես գործունեության տեսակներ: 3. Մարդկային կյանքի բնութագրիչներ. ազատություն և երջանկություն, հավատ և սեր: 4. Մարդը կյանքի իմաստի որոնումներում: 5. Գեղագիտական իդեալի փոխակերպումները պատմության ընթացքում: 6. Գեղեցիկն արվեստում:
Ուղղորդող հարցեր 1. Ի՞նչ դեր ունեն գործելը, խաղալը, ուսումը, աշխատանքը, ազատ ժամանակը մարդու կյանքում: 2. Ինչպե՞ս են մեկնաբանել տարբեր ժամանակների մտածողները կյանքի իմաստը: 3. Ինչպե՞ս է փոխվել գեղեցիկի ընկալումը պատմության ընթացքում:

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Հարցազրույցներ Ինչպես են մարդիկ անցկացնում իրենց ազատ ժամանակը, ինչպես է այն փոխվել: **Ուսումնասիրություն** Ինչպես է փոխվել գեղագիտական իդեալը ժամանակի ընթացքում:	**Կայունություն և փոփոխություն** Հասկանա ժամանակի ազդեցությունը մարդու ապրելակերպի և գեղագիտական իդեալների վրա:

Միջառարկայական կապերը թեմայում
Արվեստ - Երգ, թատրոն, կինո, նկարչություն: **Լեզուներ և գրականություն** - Համապատասխան տեքստի մեկնաբանում: **Հայոց և համաշխարհային պատմություն** - Հին աշխարհի, միջնադարի, նոր և նորագույն

շրջանի արվեստը: **Երկրաչափություն** - Չափումներ, գծապատկերներ, հատակագծեր:
Հանրակրթական չափորոշիչ
Մ24, Մ34

Հասարակագիտություն
Թեմա 4. Հասարակական կյանքի օրինաչափությունները (10 ժամ)
Նպատակ
Սովորողները կկարողանան բացատրել հանրային բարիքի ստեղծման գործում անհատի ինքնագիտակցության և պատասխանատվության կարևորությունը: Կկարողանան վերլուծել ժամանակակից մարտահավերներին արդյունավետ դիմակայող հասարակությանը բնորոշ հատկանիշները: Միջառարկայական կապի միջոցով կներկայացնեն հասարակական կյանքում բնության օրենքների կիրառությունը:
Վերջնարդյունքը
12.4.1.Հիմնավորի հանրային բարիքի կարևորությունը: 12.4.2.Նկարագրի, թե ինչ է հասարակական տոկունությունը: 12.4.3.Կապակցի բնության օրենքները, կանոնները հասարակական կյանքի զարգացումների հետ:
Թեմայի բովանդակություն
1. Հանրային բարիքի կարևորությունը: 2. Հանրային համերաշխություն:

3. Բազմազանությունն ու միասնությունը որպես տոկուն հասարակության բնութագրիչներ:
4. Ճգնաժամը՝ որպես հնարավորություն:
5. Բնության օրենքները հասարակական կյանքում. իներցիա, հարաբերականություն, փոխադարձություն, կատալիզացիա, էկոհամակարգ, համաձուլվածք:

Ուղղորդող հարցեր

1. Ի՞նչ կլինի հասարակության հետ, եթե յուրաքանչյուրը մտածի միայն իր շահի տեսանկյունից:
2. Ինչո՞ւ է հանրային համերաշխությունը կարևոր:
3. Ինչպե՞ս համադրել բազմազանությունը և միասնությունը:
4. Ինչո՞ւ են ստեղծվում ճգնաժամային իրավիճակները և ո՞րն է դրանց դրական ազդեցությունը մարդկության պատմության վրա:
5. Ինչպե՞ս են կապված բնության և հասարակության օրենքները:

Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Իրավիճակային խնդիրներ Ինչպե՞ս են կարծրատիպերը խանգարում հասարակական համերաշխությանը, ինչպե՞ս են բնության օրենքները կիրառվում հասարակական կյանքում: **Քննարկումներ** Օրինակների միջոցով ներկայացնել, թե ինչ կարող են կորցնել մարդիկ, եթե որոշ իրավիճակներում չկարևորեն հանրային բարիքը: Բնության որոշ օրենքների, օրինաչափությունների գործողությունը հասարակական կյանքում:	**Պատճառ և հետևանք** Հասկանա անհատի և հասարակության փոխկապվածությունը, բնության օրենքների գործողությունը հասարակական կյանքում:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Հասարակական կյանք, կենցաղ:	

Ֆիզիկա - Իներցիա, հարաբերականություն: **Քիմիա** - Կատալիզացիա, համաձուլվածք: **Կենսաբանություն** - Էկոհամակարգ:
Հանրակրթական չափորոշիչ
Մ23, Մ24, Մ27, Մ36, Մ40

Հասարակագիտություն
Թեմա 5. Մարդկության գլոբալ հիմնախնդիրներ (6 ժամ)
Նպատակ
Սովորողները կվերլուծեն գլոբալացման դրական և բացասական ազդեցությունները, դրանց առաջ բերած հիմնախնդիրներն ու լուծման ճանապարհները, կկարողանան արժևորել բնության և մարդու ներդաշնակ համակեցության կարևորությունը:
Վերջնարդյունքը
12.5.1 Եզրահանգումներ անի գլոբալացման դրական և բացասական կողմերի մասին: 12.5.2 Եզրահանգումներ անի մարդկության գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ կայուն զարգացման համատեքստում: 12.5.3 Բացահայտի գլոբալ հիմնախնդիրների ազդեցությունը Հայաստանի վրա:
Թեմայի բովանդակություն
1. Գլոբալացում:

2. Ժամանակակից գլոբալ հիմնախնդիրներ: 3. Գլոբալ հիմնախնդիրների ազդեցությունը Հայաստանի վրա:	
Ուսումնական գործունեության տեսակ	**Խաչվող գաղափարներ**
Խմբային քննարկումների, ՝ օրինակների միջոցով ցույց տալ գլոբալացման դրական ու բացասական ազդեցությունն իր և հասարակության կյանքում: **Նախագծային աշխատանք՝** օգտագործելով տեղեկատվական տարբեր աղբյուրներ, բացահայտել աղքատության, կրթության, առողջապահության, բնապահպանական (կլիմայի փոփոխություն) գլոբալ հիմնախնդիրները:	**Պատճառ և հետևանք** Հասկանա մարդու ապրելակերպի ազդեցությունը հասարակության, բնության վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց և համաշխարհային պատմություն - Կոնֆլիկտ, ցեղասպանություն, պատերազմ, ռասիզմ, ֆաշիզմ: **Ինֆորմատիկա** - Համացանցի օգտակար ու բացասական կողմերը: **Աշխարհագրություն** - Երկիր մոլորակի աղտոտվածությունը: **Կենսաբանություն** - Բուսական և կենդանական աշխարհի վնասում: **Գրականություն** - Համապատասխան տեքստի ընթերցում և մեկնաբանություն:	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ11, Մ18, Մ21	

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը:
2. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշում:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
4. Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստվել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:
5. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական
6. դպրոցի 8–րդ դասարանի համար/ Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018:
7. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9–րդ դասարանի համար/ Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018:
8. Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը. կոմպետենցիաների զարգացման շրջանակ, Եվրոպայի խորհրդի հրատարակություն:
9. Քաղաքացի նախագիծ, համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ,Սիվիտաս Հայաստան:
10. Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար / Կ. Հարությունյան, Գ. Վարդանյան.- Եր.: Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ, 2020.- 192 էջ:
11. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ <<Հասարակագիտություն>> առարկայի ուսուցիչների համար /Կ.Հարությունյան, Ս. Խաչատրյան, Ա. Մանուչարյան,Ֆ.Սեյրանյան, Երևան 2019:

12. <<Հասարակագիտություն>> , հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2009:
13. Հանրակրթական հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի չափորոշիչ և ծրագիր (8-9-րդ դասարաններ), Երևան 2012:
14. Andrew Heywood, Political ideologies: an introduction, London, Palgrave Macmillan, 2017
15. Andrew Heywood, Politics, 5th Ed., London, Macmillan International Higher Education, 2019
16. Michael Freeden, Lyman Tower Sargent (Ed.), The Oxford Handbook of Political Ideologies, Oxford University Press, 2015
17. Мир политической науки. Учебник. В 2 кн./ отв. ред. А.Ю. Мельвиль; МГИМО (У) МИД России. - М. : Просвещение, 2004
18. Ալեքսանյան Ա., Գալստյան Ն., Սիմոնյան, «Հասարակագիտություն» առարկայի ուսումնաօժանդակ ձեռնարկ: 11-րդ դասարան.- Եր.: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2020
19. Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման եւ իրագործման հանձնաժողով, *Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն*, Երեւան, 2014:
20. Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման եւ իրագործման հանձնաժողով, *Ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը մեծահասակների համար*, Երեւան, 2014:
21. Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման եւ իրագործման հանձնաժողով, *Ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը սովորողների համար*, Երեւան, 2015:
22. Հայաստանի պատանեկան նվաճումներ, *Աշակերտական գործարար ընկերություններ*, Երեւան, Տիգրան Մեծ, 2011:
23. Սիվիտաս ՀԿ, *Համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագիծ, ուսումնաօժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար*, Երեւան, Ֆաստ պրինտ, 2016:
24. Bank Negara Malaysia. (2015). *Financial Literacy Standards for Malaysian schools.*
25. National Council of Financial Supervisors. (2013). *Core competencies for Financial Education in Kindergarten, Basic Education, Secondary Education and Adult Learning and Training.* Portugal: Ministry of Education and Science.
26. OECD. (2015). *OECD/INFE core competencies framework on financial literacy for youth.*

27. OECD. (2013). *Financial education for youth and in schools: OECD/INFE policy guidance, challenges and case studies.*
28. OECD (2019), *PISA 2018 Results (Volume I): What Students Know and Can Do, PISA*, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/5f07c754-en.
29. OECD (2014), *Financial Education for Youth: The Role of Schools,* OECD Publishing, Paris. DOI: http://dx.doi.org/10.1787/9789264174825-en.
30. Shaun Mundy (2009), *"Financial Education Programmes in Schools",* OECD Journal: General Papers, Vol. 2008/3. DOI: http://dx.doi.org/10.1787/gen_papers-v2008-art18-en.
31. Alison O'Connell (2009), *"Evaluating the Effectiveness of Financial Education Programmes",* OECD Journal: General Papers, Vol. 2008/3. DOI: http://dx.doi.org/10.1787/gen_papers-v2008-art17-en.
32. Personal Finance Education Group. (2013). *Financial Education Planning Framework (11-19 years)*. UK: pfeg.
33. Personal Finance Education Group. (2013). *Financial Education Planning Framework (3-11 years)*. UK: pfeg.
34. Walker/Walker (2012), *"Personal Finance: Building Your Future",* McGraw-Hill Irwin, US.
35. Garman & Forgue (2014), *"Personal Finance"*, 12th edition, US.
36. JA Company Program®, http://www.janorthalberta.org/students/company-program/.
37. JA More than Money®, https://www.juniorachievement.org/web/ja-usa/ja-programs?p_p_id=56_INSTANCE_abcd&p_p_state=maximized&_56_INSTANCE_abcd_groupId=14516&_56_INSTANCE_abcd_articleId=19316.